ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 116

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի պահանջներին համապատասխան.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Մեծամոր համայնքի 2022-2026թթ. զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի:
2.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի վրա:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՅԿՈՒՀԻ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱՋԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ՀՀ Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2022 թվականի մայիսի 13-ի
N 116 որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022-2026թթ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ Մեծամոր համայնքի ղեկավար **Վահրամ Խաչատրյանի** կողմից

ՄԵԾԱՄՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք----------3

2. Համայնքի և բնակչության ընդհանուր իրավիճակի նկարագրություն----------5

2.1. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակ----------37

2.2. Համայնքի իրականացվող ծրագրերը----------39

2.3. Համայնքի ֆինասական իրավիճակի նկարագրություն և ֆինասական կանխատեսումներ----------75

2.4. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ----------77

2.5. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալքների (ՈւԹՀՍ) վերլուծություն----------79

3. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ------82

4. Ծրագրերի անձնագրեր----------85

5. ՀՀԶԾ ֆինասավորում----------97

Վերջաբան----------99

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ ձեզ՝ սիրելի բնակիչներ, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Շնորհակալություն, համայնքի զարգացման ծրագրում համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Մեծամոր համայնքի զարգացման ծրագրերը իրագործելու, համայնքի հիմնախնդիրների լուծման կենսամակարդակի բարելավման գործում մեզ սպասվում է պատասխանատու աշխատանք: Անհրաժեշտ է ձեռնամուխ լինել և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքի և բնակավայրերի ծրագրերի զարգացման ուղղությամբ:

Համայնքում և բնակավայրերում նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ: Դրանք են՝ մանկապարտեզների վերանորոգումը, գազաֆիկացումը և ջեռուցումը, մանկապարտեզների տանիքների կապիտալ վերանորոգումը, Մեծամոր համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների կառուցումը, ջերմոցային տնտեսության կառուցումը, խորքային հորի հորատումը և վերականգնումը, ասֆալտապատման աշխատանքների իրականացում, որոնք նաև խթան կհանդիսանան նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ:

Այս ծրագրերից բացի համայնքապետարանը իրականացրել և իրականացնելու է նաև այլ համայնքային խնդիրներ, որոնք կատարվում են պարբերաբար: Դրանք են՝ սանիտարական վիճակի մաքրման, շուրջօրյա ջրամատակարարման և ջրահեռացման, կանաչապատ գոտիների պահպանման և ընդլայնման, ոռոգման ջրագծի կառուցման, ներհամայնքային ճանապարհների, ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհների կառուցման և հարթեցման աշխատանքները, աջակցություն համայնքում, բնակավայրերում զոհվածների և սոցիալապես անապահով ընտանիքներին ինչպես նաև

համայնքային, սոցիալ-տնտեսական այլ խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներ:

Խիստ անհրաժեշտ եմ համարում նոր սերնդի կրթության, զարգացվածության մակարդակի ավելացումը, որովհետև նրանց է վստահված մեր երկրի վաղվա օրը և ապագան, իսկ առավել զարգացած երկիր ունենալն առաջին հերթին պայմանավորված է գիտելիքների մեծ պաշար ունեցող սերունդով:

Համայնքում և բնակավայրերում առկա կարևոր խնդիրներն են աշխատատեղերի բացակայությունը, բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը, սոցիալապես անապահով ընտանիքները, համայնքի մաքրման կայանը, վերելակների մաշվածությունը և այլն:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կազմման գործընթացում իրենց մասնակցությունն ունեն համայնքային ենթակայության բոլոր կազմակերպությունները՝ հանդես գալով իրենց առաջարկություններով և վերլուծություններով:

Շնորհակալություն:

2. Համայնքի և բնակավայրերի ընդհանուր իրավիճակի նկարագրություն



Մեծամոր համայնք

2021 թվականի դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրության արդյունքում ձևավորվեց Մեծամոր խոշորացված համայնքը (այսուհետ՝ համայնք): Մեծամոր համայնքի վարչական բնակավայրերն են՝ Ալաշկերտ, Ամասիա, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արմավիր, Արտաշար, Արևիկ, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Փշատավան, Ակնալիճ, Տարոնիկ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային բնակավայրը հիմնադրվել է 1969 թվականին, երբ սկսվել են հայկական ատոմային էլեկտրոկայանի շինարարական աշխատանքները: Սկզբում այն անվանվել է որպես քաղաքատիպ ավան, այնուհետև 1995 թվականին անվանակոչվել է որպես քաղաք:

Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: Երևան քաղաքից գտնվում է 38 կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոնից 6 կմ հեռավորության վրա: Քաղաքում գործում է 2 դպրոցական, 3 նախադպրոցական հաստատություններ, մշակույթի տուն, մարզադպրոց, արվեստի դպրոց, գրադարան, բժշկական կենտրոն, փոստային բաժանմունք, 2 հասարակական կազմակերպություններ, եկեղեցի և այլ հասարակական օբյեկտներ: Մեծամոր քաղաքը ունի քաղպաշտպանության համար նախատեսված հիսուն թաքստոց:

Ալաշկերտ բնակավայր

Ալաշկերտ բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 7 կմ հարավ: Ալաշկերտ է անվանվել 2006 թվականի հուլիս 4-ին: Բնակչության նախնիների մի մասը 1915-1918թթ. գաղթել են Բայազետ քաղաքից և շրջակայքի գյուղերից: Գյուղում գործում երկու դպրոց՝ հանրակրթական և երաժշտական, գադարան, բուժամբուլատորիա, մարզադաշտ: Վերանորոգման կարիք ունեն երաժշտական դպրոցը, գրադարանը և բնակավայրի վարչական շենքը, բարեկարգման կարիք ունի մարզադաշտը: Գյուղում կանգնեցված է երեք հուշարձան նվիրված Հայրենական պատերազմի զոհերին և Արցախյան պատերազմների զոհերին: Գյուղում գործում է առևտի օբյեկտներ: Գյուղում չկա քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Փլուզման եզրին է գյուղի մշակույթի տունը:

Ամասիա բնակավայր

Ամասիա բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 890 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1930թ.: Բնակչության մի մասը գաղթել է Սառնաղբյուր գյուղից, մյուս մասը՝ Կոստանդնուպոլսից: Գյուղում գործում է հանրակրթական դպրոց և նախադպրոցական հաստատություն, բուժամբուլատորիա: Վերանորոգման կարիք ունի մշակույթի տունը, բնակավայր վարչական շենքը: Գյուղում չկա քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ, անմխիթար վիճակում է մշակույթի տունը:

Այգեշատ բնակավայր

Այգեշատ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 10 կմ հարավ-արևելք ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: Բնակչության նախնիները և այժմյան բնակչության մի մասը այստեղ են ներգաղթել Մուշից, Պարսկաստանից և Սիրիայից: Գյուղում է գտնվում Սբ. Գևորգ եկեղեցի: Գյուղում կանգնեցվել է Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան պատերազմի ժամանակ զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան: Գյուղում գործում հանրակրթական դպրոց,

նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, բուժամբուլատորիա: Գյուղը ունի քաղպատպանության համար նախատեսված թաքստոցներ, որոնք վերանորոգման կարիք ունեն, ինչպես նաև բարեկարգման կարիք ունեն զբոսայգին և մարզադաշտը: Գյուղում գործում են սննդամթերքի առևտրի օբյեկտներ:

Արազափ բնակավայր

Արազափ բնակավայրը գտնվում է Արաքս գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 15 կմ հարավ-արևելք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: Բնակչության մի մասը գաղթել են Պարսկահայաստանի Խոյի և Սալմաստի գյուղերից: Գյուղում է գտնվում Սբ. Աստվածածին և Սբ. Վարդան մատուռները, որոնք բարեկարգման կարիք ունեն: Դպրոցում գործում են հանրակրթական դպրոց, ԲՄԿ, մասամբ գործում է նաև նախադպրոցական հաստատությունը: Մշակույթի տունը և գրադարան վերանորգման կարիք ունեն: Գյուղում կա զբոսայգի, չկան քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Արզափ բնակավայրի վարչական տարածքում է գտնվում «Որդան կարմիրի» արգելավայրը: Գյուղում գործում են սննդամթերքի և տնտեսական առևտրի օբյեկտներ:

Արգավանդ բնակավայր

Արգավանդ բնակավայրը գտնվում է Արաքսի ձախ կողմում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 13 կմ հարավ-արևելք: 1831թ. ուներ 146 բնակիչ, որոնցից 66-ը (10 տուն)՝ տեղացիներ, իսկ 80-ը (17 տուն)՝ Սալմաստից գաղթածներ: Գյուղը ունեցել է Սբ. Աստվածածին եկեղեցի, որն այժմ ավերվել է, նորը վերակառուցվել է նույն վայրում, բնակավայրում կա Դամբարանադաշտ հուշարձան, երեկու զբոսայգի: Գյուղում գործում է հանրակրթական դպրոց, մասնակի վերանորգման կարիք ունեն նախադպրոցական հաստատությունը և մշակույթի տունը: Վերանորգման կարիք ունի բուժամբուլատորիան և գարադարանը: Գյուղում գործում են հանդիսության սրահ և առևտրի օբյեկտներ: Գյուղում չկան քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ:

Արմավիր բնակավայր

Արմավիր բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 9 կմ հարավ: Բնակիչների մեծ մասը գաղթել են Խոյից, Սուրմալուից, Մուշից, Սիրիայից և այլ վայրերից: Գյուղի մոտ են գտնվում Հայաստանի առաջին մայրաքաղաքի՝ Արմավիրի (Արգիշտիխինիլի-Արմավիր) քաղաքի ավերակները: Գյուղում է գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցի (Ղուրդուղուլի): Գյուղը ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, բուժամբուլատորիա, քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոց: Քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցը ունի վերանորոգման կարիք, իսկ գյուղում գտնվող զբոսայգին բարեկարգման:

Արտաշար բնակավայր

Արտաշար բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 13 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 843 մ բարձրության վրա: Գյուղն ի հայտ է եկել մոտավորապես 1650-ական թվականներին: Սկզբնական շրջանում բնակչությունը շատ քիչ է եղել ապրել են մոտ 6 ընտանիք: 1915 թվականի ջարդերից հետո գյուղ են եկել և բնակություն հաստատել հիմնականում Մուշից գաղթած մարդիկ: Գյուղում կա մեկ մատուռ: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա, քաղպաշտպանության համար նախատեսված չորս թաքստոց, բոլորը ունեն վերանորգման կարիք: Գյուղում գործում են սննդամթերքի առևտրի օբյեկտներ:

Արևիկ բնակավայր

Արևիկ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 7 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: Արևիկ է անվանվել 1946թ. ապրիլի 4-ին: Արևիկի բնակչության նախնիները հիմնականում Իգդրից, Փանիկից, Կողբից, Խալֆալուից, Էվջիլարից, Ախվեիսից, Ամարաթից, Խնուսից, Տարոնից, հետագայում նաև Սյունիքից, Շիրակից ներգաղթածներ են: Արևիկից Արմավիր գյուղ տանող ճանապարհի վրա գտնվող բլրի պեղումներից (1962-1966 թթ.) հայտնաբերվել են

մ.թ.ա. 3-րդ հազարամյակի շինության հետքեր: Գյուղը ունի երեք դպրոց՝ հանրակրթական, երաժշտական և արվեստի, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա: Վերանորոգման կարիք ունեն ՝ հանրակրթական, երաժշտական դպրոցները, մշակույթի տունը, գրադարանը և բուժամբուլատորիան: Գյուղը չունի քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ և նախադպրոցական հաստատություն: Գյուղում գործում են սննդամթերքի և տնտեսական առևտրի օբյեկտներ:

Բամբակաշատ բնակավայր

Բամբակաշատ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 4 կմ հարավ-արևմուտք ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա: Բնակչության նախնիները 1842թ. գաղթել են Բիթլիսից, Սուրմալուից, Կողբից: Գյուղը ունի 14-րդ դարի եկեղեցի: Գյուղում կա մեկ մատուռ և երեք պատմամշակութային հուշարձան: Գյուղում գործում են հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, , գրադարան, բուժամբուլատորիա: Վերանորգման կարիք ունեն նախադպրոցական հաստատությունը և բուժամբուլատորիան, բարեկարգման՝ մարզադաշտը:Գյուղը ունի մշակույթի տուն: Գյուղում չկա քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում են սննդամթերքի և տնտեսական առևտրի օբյեկտներ:

Բերքաշատ բնակավայր

Բերքաշատ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 19 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 900 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1928թ.: Բնակչության նախնիները հիմնականում 1926-1928թթ. Թուրքիայից (Կոստանդնուպոլսից) և Հունաստանից ներգաղթածներ են: Գյուղու կա մեկ մատուռ: Գյուղում գործում է հանրակրթական դպրոց և բուժամբուլատորիա: Վերանորոգման կարիք ունի գյուղի մշակույթի տունը, ինչպես նաև բարեկարգման կարիք ունի մարզադաշտը: Գյուղում չկան քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ և նախադպրոցական հաստատություն: Գյուղում գործում է սննդամթերքի առևտրի օբյեկտ:

Գետաշեն բնակավայր

Գետաշեն բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 13 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 880 մ բարձրության վրա: Բնակչության նախնիները 1917-1918թթ. գաղթել են Խոյից, Սալմաստից և Մուշից: Գետաշեն է անվանվել 1946թ. ապրիլի 4-ին: Գյուղում է գտնվում Սբ. Հովհաննես եկեղեցին: Գյուղում կանգնեցվել է Հայրենական Մեծ պատերազմին նվիրված հուշարձան կոթող և հիմնվել է պուրակ: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, բուժամբուլատորիա: Մշակույթի տունը կարիք ունի հիմանորոգման, իսկ բուժամբուլատորիան կարիք ունի վերանորոգման: Գյուղում չկան քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում են սննդամթերքի առևտրի օբյեկտներ:

Եղեգնուտ բնակավայր

Եղեգնուտ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 11 կմ հարավ-արևելք ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: Եղեգնուտ գյուղի պատմական անվանումներն են՝ Բադալ, Ղամիշլու, Ղամշկուտ, Մոլլա Բադալ, Ռահիմաբադ, Սեֆիաբատ: Անվանվել է Եղեգնուտ 1946 թվականի ապրիլի 4-ին: Բնակչության մեծ մասը Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ,Վան և Մուշ գավառներից գաղթածներն են: Գյուղում կա երեք մատուռ, մարզադաշտ, քաղպաշտպանության համար նախատեսված 81 թաքստոց: Գյուղում գործում է հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, գրադարան: Գյուղում կա սննդամթերքի առևտրի օբյեկտներ և երեք արդյունաբերական ձեռնարկություն:

Երասխահուն բնակավայր

Երասխահուն բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 14 կմ հարավ-արևելք, հարթավայրում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: Գտնվում է ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա գտնվող հարթավայրում: Գյուղը հիմնադրվել է 1920 թվականին, անվանվել Երասխահուն՝ 1950 թվականի ապրիլի 19-ին: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա: Բոլորը ունեն վերանորոգման կարիք, իսկ մշակույթի տունը

հիմանորոգման կարիք: Գյուղը չունի քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում են սննդամթերքի և տնտեսական առևտրի օբյեկտներ:

Զարթոնք բնակավայր

Զարթոնք բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 13 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: Զարթոնք բնակավայրը հիմնադրվել է 1915-1918թթ. Արևմտյան Հայաստանից գաղթված փախստականներից: Գյուղը նախկինում կոչել են Ղամշլու՝ քանի որ տարածքը ղամիշապատ է եղել: 1950-ական թվականներին գյուղի տարածք վերաբնակեցման նպատակով հանրապետության տարբեր շրջաններից վերաբնակեցվել են բազմաթիվ ընտանիքներ: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, մշակույթի տուն, բուժամբուլատորիա: Մշակույթի տունը ունի վերանորոգման կարիք: Իսկ մարզադաշտը և զբոսայգին ունեն բարեկարգման կարիք: Գյուղը չունի քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում է սննդամթերքի առևտրի օբյեկտ:

Հայկավան բնակավայր

Հայկավան բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 9 կմ հարավ: Բնակավայրը հիմնադրվել է՝ 1870-ական թվականներից: Բնակչության նախնիների մի մասը այստեղ է գաղթել Սուրմալուից և Իգդիրից: Այստեղ հայտնաբերվել են սեպագիր արձանագրություններ և հնագույն բնակավայրի մնացորդներ, ճարտարապետական հուշարձաններից նշանավոր է Սուրբ Աստվածածին եկեղեցին (19-րդ դար), որը վերակառուցվում է: Գյուղում գործում է հանրակրթական դպրոց: Վերանորոգման կարիք ունի նախադպրոցական հաստատությունը, մշակույթի տունը, գրադարանը, իսկ մարզադաշտը՝ բարեկարգման: Գյուղում գործում է սննդամթերքի առևտրի օբյեկտ:

Մարգարա բնակավայր

Մարգարա բնակավայրը գտնվում է Արաքսի ձախափնյա հարթավայրում, մարզկենտրոնից 18 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: Բնակավայրը հիմնադրվել է՝ 1800-ական թթ.-ից: Բնակչության նախնիների մի մասը 1828-1831թթ. գաղթել է Մուշից և Իգդիրից: Մարգարա գյուղի մոտ է գտնվում Արաքսի գլխավոր կամուրջներից մեկը՝ Մարգարայի կամուրջը: Գյուղում գործում է հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, գրադարան և հիվանդանոց: Գյուղում վերանորգման կարիք ունի մշակույթի տունը: Գյուղում գործում է երկու առևտրի օբյեկտ:

Մրգաշատ բնակավայր

Մրգաշատ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 2 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: Բնակչության նախնիների մի մասը 1828-1929թթ. և 1915-1918թթ. գաղթել են Սուրմալուից, Խնուսից, Ալաշկերտից, Խոյից և Սալմաստից: 1949-1950թթ. այստեղ հաստատվել են Լիբանանից եկած հայրենադարձները: Գյուղում է գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցին (1900թ.): Գյուղի մոտ է գտնվում մ.թ.ա. 3-րդ-2-րդ հազարամյակների թվագրվող «Սև բլուր» բնակատեղին: Գյուղում գործում են երկու դպրոց՝ հանրակրթական և երաժշտական, որոնք ունեն վերանորագման կարիք: Գյուղում գործում է նաև նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա: Գյուղում կա քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոց, որ վերանորգման կարիք ունի: Գյուղում գործում է տասներկու սննդամթերքի օբյեկտ:

Նալբանդյան բնակավայր

Նալբանդյան բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1602 թվականին: Բնակչության նախնիների մի մասը 1914-1922թթ. գաղթել են Վանի, Իգդիրի, Կողբի և Սալմաստի գավառներից: Գյուղը ունի մատուռ: Գյուղում գործում է հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, բուժամբուլատորիա: Վերանորագման կարիք ունի քաղպաշտպանության

համար նախատեսված թաքստոցը: Բարեկարգման կարիք ունի զբոսայգին: Գյուղում գործում է սննդամթերքի տաս առևտրի օբյեկտ, երեք՝ դեղատուն:

Նոր Արտագերս բնակավայր

Նոր Արտագերս բնակավայրը գտնվում է, ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 14 կմ հարավ-արևմուտք: Բնակչության նախնիները գաղթել են Կողբից, Սասունից և Սուրմալուից: Գյուղում կա մատուռ: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա: Բոլորը ունեն վերանորոգման կարիք: Գյուղը չունի քաղպատպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում է սննդամթերքի երեք առևտրի օբյեկտ:

Նոր Արմավիր բնակավայր

Նոր Արմավիր բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 8 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 885 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1923թ. Պոլսից և այլ տեղերից եկած հայրենադարձներ կողմից: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա, քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոց: Վերանորոգման կարիք ունեն հանրակրթական դպրոցը, մշակույթի տուն և գրադարանը: Բարեկարգման կարիք ունի մարզադաշտը և զբոսայգին: Գյուղում գործում է սննդամթերքի երեք առևտրի օբյեկտ:

Նոր Կեսարիա բնակավայր

Նոր Կեսարիա բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 910 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 16 կմ հարավ-արևմուտք: Հիմնադրվել է 1949թ.: Նոր Կեսարիա է անվանվել 1969թ. հունվարի 14-ից: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա: Բոլորը ունեն վերանորոգման կարիք: Գյուղը չունի քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում է սննդամթերքի երկու առևտրի օբյեկտ:

Նորապատ բնակավայր

Նորապատ բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 1 կմ հարավ: Բնակավայրը հիմնադրվել է 1928 թվականին Սարդարապատ գյուղից առանձնացված հողամասի հատվածի վրա: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, գրադարան, բուժամբուլատորիա, քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոց: Գրադարանը, բուժամբուլատորիան և քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցը ունեն վերանորոգման կարիք: Գյուղը ունի թատրոնի շենք, որը ևս ունի վերանորգման կարիք: Գյուղում գործում են հասարակական նշանակության սննդի օբյեկտ, սննդամթերքի և տնտեսական առևտրի օբյեկտներ:

Շենավան բնակավայր

Շենավան բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 890 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 17 կմ հարավ-արևմուտք: Բնակչության նախնիների մի մասը գաղթել է Սուրմալուից, Թալինից և այլ տեղերից: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, մշակույթի տուն, բուժամբուլատորիա: Բոլորը ունեն վերանորոգման կարիք: Գյուղը չունի քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում է սննդամթերքի առևտրի օբյեկտներ:

Ջանֆիդա բնակավայր

Ջանֆիդա բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 13 կմ հարավ: Բնակչության նախնիների մի մասը այստեղ են գաղթել Մուշի, Մանազկերտի, Սասունի, Ալաշկերտի և այլ գավառներից: Գյուղում ակ մեկ մատուռ: Գործում է հանրակրթական դպրոցը և նախադպրոցական հաստատություն, բուժամբուլաորիա: Վերանորոգման կարիք ունեն մշակույթի տունը և գրադարանը, բարեկարգման՝ մարզադաշտ: Գյուղում կա քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում են դեղատուն, սննդամթերքի և տնտեսական առևտրի օբյեկտներ:

Ջրաշեն բնակավայր

Ջրաշեն բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 5 կմ հարավ: Հիմնադրվել է 1928թ.: Բնակչության մի մասի նախնիները գաղթել են Սալմաստի, Արևմտյան Հայաստանի Բասենի, Երևանի նահանգի Սուրմալուի գյուղերից, նոր ժամանակներում՝ Լիբանանից, Հունաստանից և Սիրիայից: Գյուղը գտնվում է հնագույն Արմավիր մայրաքաղաքի տարածքում: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա: Հանրակրթական դպրոցը, մշակույթի տունը, գրադարանը և բուժամբուլատորիան ունեն վերանորոգման կարիք: Գյուղում գործում է սննդամթերքի առևտրի օբյեկտ:

Վարդանաշեն բնակավայր

Վարդանաշեն բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 18 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: Բնակիչների նախնիների մի մասը 1914-1920թթ. գաղթել են Սուրմալուի գյուղերից: Գյուղում է գտնվում 19-րդ դարի Սբ. Աստվածածին մատուռ: Գյուղում գործում են հանրակրթական դպրոց, բուժամբուլատորիան, որոնք վերանորոգման կարիք ունեն: Գյուղը ունի մշակույթի տուն և գրադարան, որոնք վերանորոգման կարիք ունեն, ինչպես նաև բարեկարգման կարիք ունի մարզադաշտը: Գյուղում գործում են դեղատուն, սննդամթերք առևտրի օբյեկտ: Գյուղը չունի քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ և նախադպրոցական հաստատություն:

Տանձուտ բնակավայր

Տանձուտ բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 11 կմ հարավ-արևելք: Բնակիչների նախնիների մի մասը գաղթել են Կարսի և Մուշի գյուղերից, իսկ մի մասն էլ հայրենադարձվել Իրանից: Կան նաև Բերդի, Թալինի, Մարալիկի տարածաշրջաններից եկած վերաբնակիչներ: Գյուղում է գտնվում 1912 թվականի Սբ. Սահակ եկեղեցին: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, բուժամբուլատորիա, որոնք ունեն վերանորգման կարիք: Գյուղում կա նաև

գրադարան, զբոսայգի, մարզադաշտ: Գյուղում գործում է սննդամթերքի և տնտեսական առևտրի օբյեկտներ:

Փշատավան բնակավայր

Փշատավան բնակավայրը գտնվում է Արաքս գետի ձախ ափին, մարզկենտրոնից 14 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: Բնակչության նախնիների մի մասը գաղթել է Կարինի նահանգի Բայազետի գավառի Առվտոց և Մոսուն գյուղերից: Գյուղում գործում են հանրակրթական դպրոց, բուժամբուլատորիա: Վերանորգման կարիք ունի մշակույթի տունը, գրադարանը, քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցը: Բարեկարգման կարիք ունի զբոսայգին, մարզադաշտը: Գյուղում գործում են սննդամթերքի առևտրի օբյեկտներ:

Ակնալիճ բնակավայր

Ակնալիճը գտնվում է Վաղարշապատ-Արմավիր խճուղու վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 12 կմ արևելք: Որպես ավան հիմնադրվել է 1954թ.: Ակնալիճի տարածքում են գտնվում նախնադարյան բերդաշենի մնացորդներ: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, բուժամբուլատորիա: Նախադպրոցական հաստատությունը և մշակույթի տունը ունեն վերանորոգման կարիք: Գյուղը չունի քաղպաշտպանության համար նախատեսված թաքստոցներ: Գյուղում գործում են սննդամթերքի տնտեսական առևտրի օբյեկտներ:

Տարոնիկ բնակավայր

Տարոնիկ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 15 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: Բնակչության նախնիների մի մասը 1915-20թթ. գաղթել են Վանի, Բիթլիսի, Մուշի գյուղերից: Տարոնիկ գյուղի արևմտյան կողմում է գտնվում մ.թ.ա. IV-II հազարամյակների Մեծամոր պատմահնագիտական արգելոց-թանգարանը: Գյուղն է գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցի: Գյուղը ունի հանրակրթական դպրոց, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա,

քաղպատպանության համար նախատեսված թաքստոց: Բոլորը ունեն վերանորոգման կարիք: Գյուղում գործում են սննդամթերքի առևտրի օբյեկտներ:

Ժողովրդագրություն

Տարեսկզբի դրությամբ Մեծամոր քաղաքային բնակավայրի մշտական բնակչությունը կազմել է 12.531 մարդ, բնակավայրը զբաղեցնում է 910,78 հա տարածք: Համայնքի ընդհանուր տարածքը կազմում է 32.622,07 հա, իսկ բնակչությունը՝ 79.409 մարդ, այդ թվում՝

- Տղամարդկանց թիվը – 37.722 մարդ
- Կանանց թիվը – 39.942 մարդ
- Թոշակառուների թիվը – 8.568 մարդ
- Տեղահանվածներ – 254 մարդ
- Միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 392 մարդ
- Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 6 մարդ
- Հաշմանդամներ – 1.441 մարդ
- Ընտանեկան նպաստի պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը – 1.107 ընտանիք
- Զոհվածների ընտանիքներ- 141 ընտանիք
- տնային տնտեսությունների թիվը – 18.056 տնային տնտեսություն

Աղյուսակ 1-ում ներկայացված է համայնքի բնակչության կազմը ըստ բնակավայրերի, Աղյուսակ 2-ում ներկայացված համայնքի բնակչության թվաքանակը՝ ըստ առանձին բնակավայրերի:

Հ/Հ	Բնակավայրեր	Տղամարդիկ	Կանայք	Թոշակառու	Տեղահանված	Միակողմանի ծնողազուրկ	Երկկողմանի ծնողազուրկ	Հաշմանդամ.	Ընտանեկան Նպաստի համակարգում Գրանցված ընտանիքներ	Զոհվածների ընտանիքներ	Տնտես. թիվը
1.	Մեծամոր	5522	7009	1829	150	26	1	**359**	**120**	20	**3065**
2.	Ալաշկերտ	1061	966	250	0	8	0	90	20	0	390
3.	Ամասիա	457	596	130	0	0	0	33	18	2	347
4.	Այգեշատ	961	923	92	5	4	0	53	17	2	443
5.	Արազափ	741	778	168	0	3	0	10	17	0	325
6.	Արգավանդ	1342	1236	288	2	14	0	11	31	2	437
7.	Արմավիր գ.	1534	1573	380	9	60	0	32	30	4	945
8.	Արտաշար	601	713	97	0	12	1	23	10	2	186
9.	Արևիկ	1563	1380	306	0	5	0	58	40	6	872
10.	Բամբակաշատ	1762	1833	569	0	20	0	30	67	3	1130
11.	Բերքաշատ	313	307	50	0	2	0	3	5	0	120
12.	Գեղաշեն	1078	1256	290	0	5	0	6	28	4	657
13.	Եղեգնուտ	1050	1119	145	5	18	0	27	37	1	475
14.	Երասխահուն	750	991	132	12	4	0	30	29	4	418
15.	Զարթոնք	1123	1080	160	0	5	1	36	22	1	392
17.	Մարգարա	580	749	150	2	0	0	5	13	3	448
18.	Մրգաշատ	2845	2937	645	38	102	1	204	95	10	1406
19.	Նալբանդյան	2209	2257	363	18	25	0	45	67	6	850
20.	Նոր Արմավիր	1037	950	220	0	0	0	15	28	3	320
21.	Նոր Արտագերս	723	888	160	0	3	0	2	35	2	471
22.	Նոր Կեսարիա	541	850	171	0	16	0	29	27	13	270
23.	Նորապատ	1107	1299	180	0	5	0	2	24	1	480
24.	Շենավան	952	749	155	0	4	0	25	22	1	350
25.	Ջանֆիդա	1811	1482	392	1	6	0	87	66	10	738
26.	Ջրաշեն	477	424	100	0	3	0	11	23	1	145

27.	**Վարդանաշեն**	606	548	114	0	2	2	16	24	4	412
28.	**Տանձուտ**	1006	1055	256	6	9	0	45	22	3	374
29.	**Փշատավան**	1154	1282	260	6	3	0	59	35	5	415
30.	**Ակնալիճ**	1630	1603	298	0	18	0	45	83	24	685
31.	**Տարոնիկ**	1186	1112	218	0	10	0	50	52	4	490

Աղյուսակ 1: *Բնակչության կազմը ըստ բնակավայրերի*

Բնակա-վայրեր	Մեծամոր	Կաշկերտ	Ամասիա	Այգեշատ	Արուճի	Արգավանդ	Արմավիր գ	Արտաշատ	Արևիկ	Բամբակաշատ	Բերքաշատ	Գեղաշեն	Եղեգնուտ	Երասխահուն	Հարթոնք	Հայկավան	Մարգարա	Մրգաշատ	Նալբանդյան	Նոր Արմավիր	Նոր Արտագերս	Նոր Կեսարիա	Նորապատ	Շենավան	Ջանֆիդա	Ջրաշեն	Վարդանաշեն	Տանձուտ	Փշատավան	Ակնալիճ	Տարոնիկ
Բնակչության Թվաքանակը	12.531	2.027	1.053	1.884	1.519	2.578	3.107	1.314	2.943	3.595	630	2.334	2.169	1.741	2.203	1.473	1.329	5.782	4.466	1.987	1.611	1.650	2.406	1.701	3.293	901	1.154	2.061	2.436	3.233	2.298

Աղյուսակ 2: *Բնակչության թվաքանակը ըստ բնակավայրերի*

Հողօգտագործում

- Համայնքի վարչական տարածքը – 32.622,07 հա
- Բնակավայրերի տարածքը---5.670,9 հա
- Գյուղատնտեսկան նշանակության հողեր – 23.082,06 հա
- Արդյունաբերական, ընդերքաօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր – 618,44 հա
- Էներգետիկ, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակայության համար – 341,02 հա
- Հատուկ պահպանվող տարածքներ/ այդ թվում պատմական և մշակույթային հողեր -659,16 հա
- Հատուկ նշանակության հողեր – 251,64 հա
- Ջրային տարածք – 1.997,41 հա
- Անտառային տարածք – 1,44 հա

Աղյուսակ 3-ում ներկայացված է համայնքի հողերի կազմը ըստ բնակավայրերի:

Հ/Հ	Բնակավայրեր	Համայնքի հողային տարածքը /հա/	Բնակա-վայրերի հողեր /հա/	Գյուղ. հողեր /հա/	Արդյ., ը-օգտ. և այլ արտ. նշ. օբյեկտների հողեր /հա/	Էներգ., տրանսպ., կապի և կոմունալ ենթ. համար /հա/	Հատուկ պահպանվող տարածքներ /այդ թվում պատմական և մշակութային հողեր/ հա/	Հատուկ նշ. հողեր /հա/	Ջրային տարածք /հա/	Անտառ. /հա/
1.	**Մեծամոր**	910,79	165,08	714,74	7,51	16,26	0,13	0	7,07	0
2.	**Ալաշկերտ**	426,82	126,91	284,15	4,21	5,04	2,21	0	4,30	0
3.	**Ամասիա**	401,48	95,58	280,56	7,02	2,68	6,53	3,86	5,25	0
4.	**Այգեշատ**	686,61	164,18	485,35	8,15	3,93	3,74	0	21,26	0
5.	**Արազափ**	1411,34	192,68	911,42	5,22	13,90	169,73	49,32	69,07	0
6.	**Արգավանդ**	1619,40	261,31	1189,10	20,84	10,38	5,80	0	131,97	0
7.	**Արմավիր գ.**	674,92	241,90	414,31	10,48	1,38	0,20	0	6,65	0
8.	**Արփաշար**	735,32	121,52	443,88	24,59	20,35	4,58	0	120,40	0
9.	**Արևիկ**	1145,57	261,61	759,10	7,08	13,05	6,24	0	98,49	0
10.	**Բամբակաշատ**	975,84	289,39	658,31	10,49	5,29	6,33	0	6,03	0
11.	**Բերքաշատ**	438,39	55,59	352,26	2,48	3,94	0,58	3,84	19,70	0
12.	**Գետաշեն**	1586,80	220,32	1180,59	28,31	1,11	5,33	21,33	129,81	0
13.	**Եղեգնուտ**	2160,20	215,05	1817,74	44,14	15,01	27,31	0	40,95	0
14.	**Երասխահուն**	1096,23	176,70	566,59	36,22	4,41	285,71	0	26,60	0
15.	**Զարթոնք**	1621,26	171,03	920,44	44,82	35,88	2,92	0	446,17	0
16.	**Հայկավան**	345,15	118,25	215,55	4,35	3,10	0,21	0	3,69	0

17.	**Մարգարա**	946,24	153,48	552,20	10,23	2,35	3,67	33,81	190,50	0
18.	**Մրգաշատ**	1788,31	387,08	1270,63	14,35	68,95	9,52	0	37,78	0
19.	**Նալբանդյան**	2008,58	370,80	1459,91	99,60	24,16	21,95	12,19	19,98	0
20.	**Նոր Արմավիր**	647,95	175,89	438,31	6,84	5,28	2,56	10,40	8,67	0
21.	**Նոր Արտագերս**	674,51	164,08	452,97	11,78	1,13	2,67	22,68	19,20	0
22.	**Նոր Կեսարիա**	1458,92	73,52	1307,70	27,05	17,35	3,27	8,34	21,69	0
23.	**Նորապատ**	382,76	131,96	225,50	6,42	7,74	2,04	0	9,10	0
24.	**Շենավան**	954,76	152,15	760,61	16,90	5,99	5,37	3,20	10,54	0
25.	**Ջանֆիդա**	1807,75	335,17	1027,30	73,89	5,32	7,56	44,11	314,40	0
26.	**Ջրաշեն**	272,34	51,16	181,27	2,39	2,42	32,97	0,04	2,09	0
27.	**Վարդանաշեն**	965,40	112,51	780,97	9,21	2,60	6,81	8,56	44,74	0
28.	**Տանձուտ**	759,32	137,23	580,61	18,21	3,13	3,21	0	16,94	0
29.	**Փշատավան**	915,71	268,48	446,28	49,98	17,17	4,52	29,96	99,32	0
30.	**Ակնալիճ**	1752,91	136,32	1590,75	3,94	7,13	4,71	0	8,62	1,44
31.	**Տարոնիկ**	1050,47	143,97	812,96	1,74	14,59	20,78	0	56,43	0
Ընդամենը		32622,07	5670,9	23082,06	618,44	341,02	659,16	251,64	1997,41	1,44

Աղյուսակ 3: *Հողօգտագործումը ըստ բնակավայրերի*

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2021թ.դեկտեմբերի 28-ի N 12-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ

Մեծամոր համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 275:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
1	***Համայնքի ղեկավար***	***1***
2	***Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ***	***1***
3-4	***Համայնքի ղեկավարի տեղակալ***	***2***
5	***Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական***	***1***
6-7	***Համայնքի ղեկավարի խորհրդական***	***2***
8	***Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար***	***1***
9	***Համայնքի ղեկավարի օգնական***	***1***
	Ընդամենը	***9***
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
10-11	***Մինչև 1000 բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ***	***2***
12-21	***1001-2000 բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ***	***10***
22-32	***2001-3000 բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ***	***11***
33-37	***3001-4000 բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ***	***5***
38-39	***4001 և ավելի բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ***	***2***
	Ընդամենը	***30***
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
40	***Աշխատակազմի քարտուղար***	***1***

Քաղաքաշինության և հողաշինության բաժին		
41	***Բաժնի պետ***	1
42	***Գլխավոր մասնագետ-ճարտարապետ***	1
43	***Գլխավոր մասնագետ-հողաշինարար***	1
44-45	***Առաջատար մասնագետ***	2
46-57	***Առաջին կարգի մասնագետ***	12
58	***Երկրորդ կարգի մասնագետ***	1
	Ընդամենը	**18**
Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին		
59	***Բաժնի պետ***	1
60	***Գլխավոր մասնագետ***	1
61-62	***Առաջատար մասնագետ***	2
63-74	***Առաջին կարգի մասնագետ***	12
75	***Երկրորդ կարգի մասնագետ***	1
	Ընդամենը	17
Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին		
76	***Բաժնի պետ***	1
77	***Գլխավոր մասնագետ-հաշվապահ***	1
78	***Գլխավոր մասնագետ***	1
79-80	***Առաջատար մասնագետ***	2
81-82	***Առաջին կարգի մասնագետ***	2
	Ընդամենը	7
Եկամուտների հաշվառման և հավաքագրման,ծրագրերի կազմման և համակարգման բաժին		
83	***Բաժնի պետ***	1
84	***Գլխավոր մասնագետ***	1
85-116	***Առաջատար մասնագետ***	32
117-118	***Առաջին կարգի մասնագետ***	2
119-120	***Երկրորդ կարգի մասնագետ***	2
	Ընդամենը	**38**
Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին		
121	***Բաժնի պետ***	1
122	***Գլխավոր մասնագետ***	1
123-124	***Առաջատար մասնագետ***	2
125-131	***Առաջին կարգի մասնագետ***	7
132-133	***Երկրորդ կարգի մասնագետ***	2
	Ընդամենը	13

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին		
134	**Բաժնի պետ**	**1**
135-136	**Գլխավոր մասնագետ**	**2**
137-138	**Առաջատար մասնագետ**	**2**
139-144	**Առաջին կարգի մասնագետ**	**6**
145-146	**Երկրորդ կարգի մասնագետ**	**2**
	Ընդամենը	**13**
Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին		
147	**Բաժնի պետ**	**1**
148	**Գլխավոր մասնագետ**	**1**
149-150	**Առաջատար մասնագետ**	**2**
151-157	**Առաջին կարգի մասնագետ**	**7**
158-159	**Երկրորդ կարգի մասնագետ**	**2**
	Ընդամենը	**13**
Իրավաբանական բաժին		
160	**Բաժնի պետ**	**1**
161	**Գլխավոր մասնագետ-իրավաբան**	**1**
162-163	**Առաջատար մասնագետ**	**2**
164	**Առաջին կարգի մասնագետ**	**1**
	Ընդամենը	**5**
Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին		
165	**Բաժնի պետ**	**1**
166	**Գլխավոր մասնագետ**	**1**
167-168	**Առաջատար մասնագետ**	**2**
169-170	**Առաջին կարգի մասնագետ**	**2**
171-172	**Երկրորդ կարգի մասնագետ**	**2**
	Ընդամենը	**8**
Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին		
173	**Բաժնի պետ**	**1**
174	**Գլխավոր մասնագետ**	**1**
175-176	**Առաջատար մասնագետ**	**2**
177	**Առաջին կարգի մասնագետ**	**1**
	Ընդամենը	**5**
	Ընդամենը համայնքային ծառայող	**138**
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
178-209	**Հավաքարար**	**32**
210-219	**Պահակ**	**10**
220-251	**Գործավար**	**32**
252-253	**Վարորդ**	**2**

254	**Տնտեսվար**	**1**
	Ընդամենը	**77**
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
255-274	**Անասնաբույժ**	**20**
275	**Ցանցային ադմինիստրատոր**	**1**
	Ընդամենը	**21**
	ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ	**275**

Քանի որ Մեծամոր համայնքը նոր կազմավորվող համայնք է այդ պատճառով դեռևս աշխատակազմի ձևավորման գործընթացը շարունակվում է, ներառյալ ՀՈԱԿ-ների աշխատողներին:

Համայնքի ղեկավարի միջնորդությամբ նախատեսվում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների վերապատրաստում տարբեր ոլորտներում, որը կիրակնացվի պետության և մասնավոր հատվածի կողմից, ինչպես նաև մասնակցություն կունենանք անցկացվող սեմինար քննարկումներին, դասընթացների, վերապատրաստման, որոնք կառնչվեն համայնքային ծառայությանը:

Համայնքի ձեռնարկությունները

Համայնքի տարածքում գործում է համեմատաբար խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, կապի հանգույց, էլեկտրացանց, ջրմուղ-կոյուղու սպասարկման, գազամատակարարման և գազի սպասարկման ձեռնարկություններ:

Արդյունաբերական ձեռնարկության անվանումը	Արտադրատեսակները
«Երևանի Արարատ-Նոյ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ	Պարենային ապրանքների արտադրություն/ կոնյակ, գինի, օղի
«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ	Պարենային ապրանքների արտադրություն/ կոնյակ, գինի,
«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ	Ավազի արտադրամաս,
«Վինեկա» ՍՊԸ	Ավազի արտադրամաս,
«Արզնի ֆերմա» ՍՊԸ	Թռչնաֆաբրիկա
«Երասխ-ՄԵԼ» ՍՊԸ	Ավազի արտադրամաս,
«Ավազպլուս» ՍՊԸ	Ավազի արտադրամաս,

Զբոսաշրջության զարգացման խթանում

Մեծամոր համայնքը կարող է վերաճել ստեղծագործական հանգույցի ի շնորհիվ պատմամշակութային ժառանգության և գյուղատնտեսության վրա հիմնված զբոսաշրջության զարգացման: Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մեծամոր համայնքում առկա է զբոսաշրջային ներուժ: Պատմամշակութային ժառանգություն համարվող 3 օբյեկտներ՝ Մեծամոր պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Հայաստանի առաջին մայրաքաղաքի՝ Արմավիրի (Արգիշտիխինիլի-Արմավիր) քաղաքի ավերակները, «Տաուսե մալաք և յոթ հրեշտակներ» կամ Զիարատ եզդիական տաճարը գտնվում են համայնքի բնակավայրերում:

Համայնքում է գտնվում նաև «Որդան կարմիրի» արգելավայրը, որը ներկայումս զբոսաշրջության արդիական ուղղություններից՝ էկոզբոսաշրջության համար կարող է դառնալ զարգացման նախադրյալ համայնքի համար:

Ինչպես Արմավիրի մարզը գյուղատնտեսական մարզ է, այնպես Մեծամոր համայնքը գյուղատնտեսական համայնք է, այս գործոնը հեռանկարային է համայնքում ագրոզբոսաշրջության զարգացման առումով:

Համայնքի բնակավայրերում գործում է «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն, որը ևս զբոսաշրջության համար հնարավորություն է:

Համայնքի բնակավայրերում գործում են հանրային սննդի օբյեկտներ:

Զբոսաշրջության զարգացման խնդիրներն են.

- Համայնքի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի բրենդի ձևավորում,
- Պատմամշակութային հուշարձանների, զբոսաշրջությանը սպասարկող ենթակառուցվածքների գույքագրում և քարտեզագրում,
- Տեղեկատվական ցուցանակների տեղադրում,
- Զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի ստեղծում,
- Հատկապես գյուղական բնակավայրերում հյուրընկալող ընտանիքների ներուժի բացահայտում, կարողությունների բարելավում,
- Ագրոզբոսաշրջության և գաստրոնոմիկ զբոսաշրջության զարգացում՝ օգտագործելով հատկապես տեղական ավանդույթները պահպանող գյուղական բնակավայրերում առկա ներուժը,
- Մեծամոր քաղաքի և գյուղական բնակավայրերի միջև զբոսաշրջային ցանցի ստեղծում,
- Նոր զբոսաշրջային հետաքրքրությունների ստեղծում,
- Տպագիր նյութերի ստեղծում,
- Մասնագետների ուսուցում և վերապատրաստում՝ գիդեր, քարտեզագրողներ:

Անշարժ գույքի կառավարում

Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման գործընթացը ներառում է դեպքեր, երբ շենք, շինություններն իրենց գործառական նշանակությամբ չեն օգտագործվում, ինչը ունի հստակեցման կարիք:

Նշվածը հնարավորություն կտա գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ՝ գույքահարկի և/կամ վարձավճարի չափերը համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությանը:

Մեծամորի համայնքապետարանի հաշվեկշռում առկա է այնպիսի անշարժ գույք, որ տարիներ շարունակ ընդգրկված լինելով գույքի կազմում՝ ենթարկվել է բարոյական և ֆիզիկական մաշվածության, ավելին, նշված գույքը պահանջում է լրացուցիչ չհիմնավորված ծախսեր՝ կապված պահպանման և շահագործման հետ:

Մեծամոր համայնքում դեռևս առկա են խորհրդային ժամանակներից քաղաքացիների կողմից զբաղեցրած, սակայն մինչ օրս չմասնավորեցված շինություններ:

Առկա են համայնքի սեփականությունը համարվող գույքեր, որոնք դեռևս չունեն իրավունքների պետական գրանցում համայնքի անվամբ:

Համայնքում առկա են նախկինում տնամերձ՝ բնակարանային շինարարության, ինչպես նաև գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար հատկացված, բայց դեռևս չսեփականաշնորհված հողամասեր:

Առկա են դեպքեր, երբ հողամասերի գործառնական և/կամ նպատակային նշանակությունները չեն համապատասխանում գործող օրենսդրությանը և ունեն հստակեցման կարիք:

Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում

Համայնքն ունի 69 բազմաբնակարան բնակելի շենքեր, 3047 բնակարաններով, որոնք բոլորը գտնում են Մեծամոր քաղաքում: Անցած տարիներին համայնքում բնակարանային շինարարության բնագավառում պետական և համայնքային միջոցներ հատկացվել են:

Բնակարանային ֆոնդի սպասարկման համար կարևոր նշանակություն ունեցավ կառավարության և համայնքի միացյալ միջոցներով համայնքի տանիքների լայնածավալ վերանորոգումը վերջին տարիներին: Վերանորոգվել է 5 շենքի տանիք:

Կարիք կա թաքստոցների և ապաստարանների վերանորոգման, վերազինման և կահավորման:

Բնության և շրջակա միջավայր պահպանություն

Տարեցտարի հետևողականորեն բարելավվում են կենցաղային թափոնների հեռացման և աղբահանության աշխատանքները:

Մեծամոր քաղաքի շենքերի կենցաղային աղբը կուտակվում է համայնքի տարածքում տեղադրված թվով 105 աղբարկղերում, իսկ գյուղական բնակավայրերում իրականացվում է աղբահավաքում շաբաթը մեկ կամ 15 օրը մեկ անգամ ռեժիմով: Համայնքում նախատեսված է տեղադրել 130 աղբարկղեր, ինչպես նաև գնել երկու աղբահավաք մեքենաներ: Մեծամոր համայնքի կուտակված աղբը սահմանված գրաֆիկով «Մեծամոր բարեկարգում» ՀՈԱԿ-ի աշխատանքների շնորհիվ ավտոմեքենաներով տեղափոխվում է համայնքի ծայրամասում գտնվող բացօթյա աղբավայր և վնասազերծվում:

Ներկայումս աղբահեռացումը մնում է խնդիր, քանի որ աղբահավաքման գրաֆիկը պետք է փոփոխել և դարձնել այնպես, որ աղբը չկուտակվի, ոչ փողոցներում, ոչ բնության մեջ:

Լուսավորության, կանաչապատ տարածքների խնամքի և քաղաքային գերեզմանոցների սպասարկման խնդիրներով ևս զբաղվում է «Մեծամոր բարեկարգում» ՀՈԱԿ–ը:

Խմելու ջրի մատակարարումը իրականացվում է Մեծամոր քաղաքում «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից շուրջօրյա գրաֆիկով: Իսկ գյուղական բնակավայրերում իրականացվում է արտեզյան ջրերի շնորհիվ օրական 4-8 ժամ տևողությամբ:

Ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը կազմում է 1500 կմ, որից ք.Մեծամոր՝ 15 կմ, գ.Ալաշեկերտ՝ 20 կմ, գ.Ամասիա՝ 27 կմ, գ.Այգեշատ՝ 25 կմ, գ.Արազափ՝ 97 կմ, գ.Արգավանդ՝ 70 կմ, գ.Արմավիր՝ 30 կմ, գ.Արտաշար՝ 52 կմ, գ.Արևիկ՝ 55 կմ, գ.Բամաբակաշատ՝ 55 կմ, գ.Բերքաշատ՝ 28 կմ, գ.Գետաշեն՝ 89 կմ, գ.Եղեգնուտ՝ 87 կմ, գ.Երասխահուն՝ 55 կմ, գ.Զարթոնք՝ 66 կմ, գ.Հայկավան՝ 25 կմ, գ.Մարգարա՝ 40 կմ, գ.Մրգաշատ՝ 92 կմ, գ.Նալբանդյան՝ 96 կմ, գ.Նոր Արմավիրի՝ 41 կմ, գ.Նոր Արտագերս 35 կմ, գ.Նոր Կեսարիա՝ 60 կմ, գ.Նորապատ՝ 40 կմ, գ.Շենավան՝ 46 կմ, գ.Ջանֆիդա՝ 62 կմ, գ.Ջրաշեն՝ 20 կմ, գ.Վարդանաշեն՝ 48 կմ, գ.Տանձուտ՝ 19 կմ, գ.Փշատավան՝ 19 կմ, գ.Ակնալիճ՝ 50 կմ, գ.Տարոնիկ՝ 36 կմ: Ցանցն ենթակա է հիմնանորոգման: Ոռոգելի տարածքը կազմում է 13.581,7 հա, որից

ք.Մեծամոր՝ 27,0 հա, գ.Ալաշեկերտ՝ 284,0 հա, գ.Ամասիա՝ 214,6 հա, գ.Այգեշատ՝ 346,0 հա, գ.Արազափ՝ 607,0 հա, գ.Արգավանդ՝ 858,0 հա, գ.Արմավիր՝ 270,0 հա, գ.Արտաշար՝ 310,0 հա, գ.Արևիկ՝ 452,0 հա, գ.Բամաբակաշատ՝ 345,1 հա, գ.Բերքաշատ՝ 178,4 հա, գ.Գետաշեն՝ 744,1 հա, գ.Եղեգնուտ՝ 633,6 հա, գ.Երասխահուն՝ 300,0 հա, գ.Զարթոնք՝ 430,0 հա, գ.Հայկավան՝ 178,0 հա, գ.Մարգարա՝ 18,0 հա, գ.Մրգաշատ՝ 596,9 հա, գ.Նալբանդյան՝ 850,7 հա, գ.Նոր Արմավիրի՝ 231,7 հա, գ.Նոր Արտագերս 382,1 հա, գ.Նոր Կեսարիա՝ 557,6 հա, գ.Նորապատ՝ 289,0 հա, գ.Շենավան՝ 580,4 հա, գ.Ջանֆիդա՝ 724,0 հա, գ.Ջրաշեն՝ 156,5 հա, գ.Վարդանաշեն՝ 470,0 հա, գ.Տանձուտ՝ 323,0 հա, գ.Փշատավան՝ 304,0 հա, գ.Ակնալիճ՝ 1200,0 հա, գ.Տարոնիկ՝ 720,0 հա:

Քաղաքային հատվածում կարիք կա կանաչապատ տարածքների վերականգնման և ավելացման՝ ինչպես քաղաքի մուտքի մոտ, այնպես էլ՝ քաղաքային զբոսայգու և հարակից՝ դեպի հիվանդանոց ձգվող տարածքում: Գյուղական բնակավայրերում կարիք կա հանգստի և ժամանցի վայրերի ստեղծման և բնակավայրի ամբողջական բարեկարգման:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Համայնքի բնակավայրերում վերանորոգման կարիք ունեցող փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է ընդհանուր 233,5 կմ, որից Մեծամոր քաղաք՝ 5 կմ գ. Ալաշեկերտ՝ 1 կմ, գ. Ամասիա՝ 3 կմ, գ. Այգեշատ՝ 7 կմ, գ. Արազափ՝ 4 կմ, գ. Արգավանդ՝ 5 կմ, գ. Արմավիր՝ 22 կմ, գ. Արտաշար՝ 6 կմ, գ. Արևիկ՝ 1,5 կմ, գ. Բամաբակաշատ՝ 2 կմ, գ. Բերքաշատ՝ 12 կմ, գ.Գետաշեն՝ 25,5 կմ, գ. Եղեգնուտ՝ 2 կմ, գ. Երասխահուն՝ 13 կմ, գ. Զարթոնք՝ 20 կմ, գ. Հայկավան՝ 7 կմ, գ. Մարգարա՝ 15 կմ, գ. Մրգաշատ՝ 6 կմ, գ. Նալբանդյան՝ 4,5 կմ, գ. Նոր Արմավիրի՝ 20 կմ, գ. Նոր Արտագերս 0,5 կմ, գ. Նոր Կեսարիա՝ 5,5 կմ, գ. Նորապատ՝ 1 կմ, գ. Շենավան՝ 6 կմ, գ. Ջանֆիդա՝ 25 կմ, գ. Ջրաշեն՝ 2 կմ, գ. Վարդանաշեն՝ 3 կմ, գ. Տանձուտ՝ 1 կմ, գ. Փշատավան՝ 6 կմ, գ. Ակնալիճ՝ 0 կմ, գ. Տարոնիկ՝ 2 կմ:

Բացակայում է կանոնավոր տրանսպորտային հաղորդակցություն շրջակա գյուղերի, մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ: Մեծամոր–Երևան երթուղին սպասարկում է նաև որոշակի ներքաղաքային հատված: Այդուհանդերձ ինչպես

մայրաքաղաքի, այնպես էլ գյուղերի հետ տրանսպորտային հաղորդակցության վիճակը մնում է խնդրահարույց:

Առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների փոքր և միջին 78 օբյեկտներ, հեղուկ վառելիք՝ 9, տեխնիկական վառելիք՝ 10, հանրային սննդի կետ՝ 10, գազի լիցքավորման կետ՝ 14:

Կրթություն, մշակույթ, սպորտ, երիտասարդություն հետ տարվող աշխատանքներ

Համայնքում գործում է 1 հիմնական /1357 աշակերտ, 31 միջնակարգ /8165 աշակերտ/ և 1 ավագ դպրոց / 251 աշակերտ/: Նշված դպրոցներում աշխատողների թիվն է՝ 1395, որից՝ 988 մանկավարժ, որից գյուղական դպրոցներում աշխատողների թիվը 1247, որից՝ 879 մանկավարժ: Շենքերը հիմնանորոգված են /13դպրոց/ հիմնանորոգված չեն /4 դպրոց/, ունեն ջեռուցման համակարգեր/ 29դպրոց/ չունեն ջեռուցման համակարգ /4դպրոց/:

Վերանորոգման կարիք ունի /15 դպրոց/:

Համայնքում գործում են 18 նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Նախադպրոցական հիմնարկներ հաճախում են 1317 երեխաներ: Մանկապարտեզները ապահովված են տիպային շենքերով, ջրով, էլեկտրաէներգիայով:

Նախակրթարանում և մանկապարտեզներից 9-ում առկա է ջեռուցման համակարգ:

Համայնքի 7 մանկապարտեզը մասամբ վերանորոգվել և ջեռուցվել է, իսկ 5 մանկապարտեզների շենքերն ունեն հիմնանորոգման խնդիր:

Համայնքում գործում են երաժշտական դպրոց, արվեստի դպրոց, գրադարան, մանկապատանեկան մարզադպրոց:

Արևիկի երաժշտական դպրոցը գտնվում է Արևիկի մշակույթի տան շենքում: Շենքը չունի ջեռուցում ջերմամեկուսացված է, սանհանգույց չկա: Ունի գույքի և

երաժշտական գործիքների համալրման խնդիր: Գործում է դաշնամուրի, քանոնի, դուդուկի, դասական վոկալի բաժիններ: Երաժշտական դպրոցը գործում է մշակույթի տան երկրորդ հարկում:

Արևիկ գյուղի մշակույթի տան շենքում գործում է նաև նկարչական խմբակ: Շենքը վերանորոգման կարիք ունի:

Մրգաշատի երաժշտական դպրոցը չունի ջեռուցման համակարգ, ջերմամեկուսացված չէ, տանիքը վերանորգված է, սանհանգույց չկա: Ունի երաժշտական գործիքների համլրման կարիք: Գործում է դաշնամուրի, քանոնի, դհոլի, դուդուկի, վոկալի բաժիններ:

Ալաշկերտի երաժշտական դպրոցը գործում է գյուղապետարանի շենքի մի հատվածում, ջեռուցում չունի, ջերմամեկուսացված է կա սանհանգույց, տանիքը վերանորոգված է ունի գույքի համալրման կարիք: Գործում է դաշնամուրի, քանոնի, ուդ, քամանչայի, շվիի բաժիններ:

Նալբանդյանի երաժշտական դպրոցը ունի ջեռուցման համակարգ, ջերմամեկուսացված չէ, չունի սանհանգույց, տանիքը ունի վերանորոգման կարիք, ունի նաև գույքի և երաժշտական գործիքների համալրման կարիք: Գործում է դաշնամուրի, դուդուկի, վոկալի և քանոնի բաժիններ:

Մեծամորի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց չունի ջեռուցման համակարգ, ջերմամեկուսացված չէ, չունի սանհանգույց, տանիքը ունի մասանկի վերանորոգման կարիք, ունի նաև գույքի և երաժշտական գործիքների համալրման կարիք: Գործում է դաշնամուրի, դուդուկի, վոկալի, քանոնի, դհոլի, թառի և կերպարվեստի բաժիններ:

Արմավիրի արվեստի դպրոցը չունի ջեռուցման համակարգ, ջերմամեկուսացված է, տանիքը ունի մասնակի վերանորոգման կարիք, ունի սանհանգույց: Ունի նաև գույքի և երաժշտական գործիքների համալրման կարիք: Գործում է քանոնի, դուդուկի, շվիի, դհոլի, վոկալի, դաշնամուրի, նկարչության բաժիններ:

Նորապատ համայնքի մշակույթի տանը գործում է «Վերելք» դրամատիկական թատրոնը, շենքը ունի ջեռուցման կարիք, ջերմամեկուսացումը իրականացվում է մասամբ, տանիքը վերանորոգված չէ, ունեն գույքի համալրման կարիք:

Համայնքում կարիք կա կինոցուցադրման, համերգների և թատերական ներկայացումների համար նախատեսվող ժամանակակից մեծ դահլիճի:

Համայնքում գործող մարզադպրոցը հիմանորոգման կարիք ունի:

Առողջապահություն

Համայնքի տարածքում գործում է «Մեծամոր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, որն իր մեջ միավորում է հիվանդանոցն ու պոլիկլինիկան: Հիվանդանոցում կա 60 մահճակալ:

Կարիք կա բժշկական կենտրոնի հիմնանորոգման և վերազինման (պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում):

Համայնքի բնակավայրերում գործում է 20 բուժամբուլատորիա:

Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ

Մեծամոր համայնքում առկա են սակավ թվով հանգստի գոտիներ: Բարեկարգման ենթակա են համայնքի զբոսայգիները և մարզադաշտների մեծ մասը: Խաղահրապարակները տեղակայված են մանկապարտեզների հարակից տարածքներում, առանձնացված խաղահրապարակների համայնքը չունի:

Աղետների, ռիսկերի կառավարում

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացան գործում բնակչության տարհանման համար մշակված է պլան:

Առաջիկայում նախատեսվում է ուշադրություն դարձնել ոլորտում առկա հետևյալ հիմնախնդիրների լուծմանը.

- Շենք-շինությունների կառուցման գործընթացներում առկա ռիսկերին համապատասխան շինարարական նորմերի և կանոնակարգերի պարտադիր կիրառում և համապատասխանեցում՝ աղետների ռիսկը նվազագույնին հասցնելու համար,
- Համայնքային մակարդակում հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում, իրականացնելով հանրային իրազեկման քարոզարշավներ

քաղաքացիների անվտանգության և աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ՝ տարածելով տեղեկություններ տեղական վտանգավոր երևույթների, աղետների ռիսկի և կլիմայի փոփոխության, ինչպես նաև վերջիններիս բացասական ազդեցությունների նվազեցման ու կառավարման քայլերի ու միջոցառումների մասին,

- Կանաչապատման և էկոհամակարգերի պաշտպանության խրախուսում,
- Բնապահպանական ոլորտի ղեկավարների և մասնավոր հատվածի հետ համագործակցային մեխանիզմների հիմնում:

2.1. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2022թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ:

Հ/Հ	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան
1.	Անշարժ գույքի հարկ	274489,0
2.	Փոխադրամիջոցի հարկ	44109000,0
3.	Տեղական տուրք	55624,0
4.	Տեղական վճար	146700,0
5.	Մուտքեր տույժեր, տուգանքներից	-
6.	Հողի վարձակալության վճար	40000,0
7.	Գույքի վարձակալության վճար	12500,0
8.	Ծառայությունների մատ. Վճարներ	64800,0
9.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	1582697,3
10.	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող այլ դոտացիա	-
11	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող նպատակային հատկացում	-
12.	Այլ եկամուտներ	10000,0
13.	Տարեսկզբի ազատ մնացորդ	-
14.	Հողի օտարումից եկամուտ	150000,0
	Ընդամենը	2777900,3

Հ/Հ	Ծախսեր	Տարեկան պլան
1.	Օրենսդիր և գործադիր մարմիններ	911280,0
2.	Հանգիստ,մշակույթ և կրոն	153400,0
3.	Սոցիալական պաշտպանություն	60000,0

4.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	30950,0
5.	Կրթություն	394000,0
6.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	198000,0
7.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	465000,0
8.	Առողջապահություն	38800,0
9.	Վարչական սարքավորումներ	10000,0
10.	Այլ մեքենաներ և սարքավորումներ	-
11.	Կապիտալ նորոգումների ծախսեր	108000,0
12.	Տրանսպորտային սարքավորումներ	32000,0
13.	Այլ հիմնական միջոցներ	74500,0
	Ընդամենը	

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 3597053,4 հազ. դրամ է:

2.2. Համայնքում իրականացվող ծրագրեր

Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակույթային հուշարձանների թվում համայնքում առանձնանում են պատմամշակութային հուշարձանները, որոնց թվում են Մեծամոր պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Հայաստանի առաջին մայրաքաղաքի՝ Արմավիրի (Արգիշտիխինիլի-Արմավիր) քաղաքի ավերակները, «Տաուսե մալաք և յոթ հրեշտակներ» կամ Զիարատ եզդիական տաճարը: Համայնքում է գտնվում նաև «Որդան կարմիրի» արգելավայրը:

Մեծամոր համայնքի բնակավայրերում կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, էթնիկ, ագրո և էկո զբոսաշրջության զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով համայնքում տնտեսության, հասարակության զարգացման շարժիչ ուժերից:

Տարածքի բնակլիմայական պայմանները լինելով՝ հարթավայրային, արևոտ, չոր ցամաքային, խոչընդոտում են զբոսաշրջության ավանդական ձևերի զարգացումը: Այս պարագայում պետք է այլընտրանքային մոտեցում ցուցաբերել:

Առաջարկվում է զբոսաշրջային գրավչություն ներկայացնող օբյեկտները օգտագործել, որպես ուղղորդող միջոց, երթուղիները ավելի հագեցած դարձնելու համար:

Համայնքում գտնվող պատմամշակութային արժեքավոր օբյեկտներից առանձնանում են՝ Տարոնիկ բնակավայրում գտնվող «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Արմավիր և Նոր Արմավիր բնակավայրերի միջև գտնվող Արգիշտիխինիլի քաղաքի փլատակները, ինչպես նաև ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի ազգի կողմից Ակնալիճ բնակավայրում կառուցված եզդիական տաճարը՝ Տաուսե Մալակի և յոթ հրեշտակների տաճարը:

Համայնքում հեռանկարներ կան նաև ագրո և էկո զբոսաշրջությունների զարգացման համար: Արարատյան դաշտը՝ Արմավիրի մարզը առանձնանում է իր յուրահատուկ այգեգործությամբ և բանջարաբոստանայի բույսերի մշակությամբ, ինչպես նաև անասնապահությամբ:

Համայնքում էկոզբոսաշրջության զարգացման համար մեծ հեռանկարներ ունի Արազափ բնակավայրի տարածքում գտնվող ԲՀՊՏ-ից «Որդան Կարմիր» արգելավայրը, որը միակն է հանրապետության տարածքում: Էկոզբոսաշրջության զարգացման կարող է մեծ ավանդ ունենալ Ակնա լիճը: Համայնքի բնակավարերի տարածքում շատ են գարնան ավետաբեր համարվող թռչուներից՝ արագիլը և ծիծեռնակը:

Ակնա լիճ

Ակնա լիճ գտնվում է Ակնալիճ գյուղից 1 կմ հարավ–արևելք, ծովի մակարդակից 853 մ բարձրության վրա: Մակերեսը 0,07 կմ^2, խորությունը 9,4 մ:

Առաջարկվում է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ակնալիճ բնակավայրում՝ Ակնա լիճի մոտակայքում ստեղծել էկոճամբար:

Էկոճամբարի ստեղծման նպատակն է այցելուներին (զբոսաշրջիկներին) հնարավորություն տալ զբաղվել ձկնորսությամբ, վայել Արարատյան դաշտի լուսաբացները:

Էկոճամաբարը բաղկացած պետք է լինի փոքրիկ փայտե տնակներից, որոնք կունենա գիշերակացի և տարական կենցաղային պայմաններ: Էկոճամբարի տարածքում պետք է լինի երկհարկանի դիտակետ և անվտանգության համար նախատեսված հանգստի սենյակ: Լճի տարածքում՝ ափերի մոտ նախընտրելի է կառուցել արևապաշտպան ծածկով կառույցներ՝ ձուկ որսալու համար նախատեսված հարմարություններով: Երկհարկանի դիտակետի առաջին հարկում նախատեսվում է կառուցել խոհանոց և պահեստ: Էկոճամբարում նախատեսվում սպառել համայնքում արտադրվող մթերքները, դրանով իսկ նպաստել մթերքների սպառմանը:

Էկոճամաբարում պետք ապահովի բնության գրկում գտնվելու միջավայրը, այդ պատաճառով նախընտրելի է, որ լինի խարույկ վառելու հարմարություններ, իսկ ամեն խարույկի շուրջ փայտե գերաններ՝ այցելունների նստելու համար: Նախընտրել է էկոճամբարի տարածքում լինի սննդի սպարկման օբյեկտ, որի ճաշանցանկը կազմված կլինի տեղական սնունդից՝ առկա ձկներից պատրաստվող ճաշատեսակներից, գյուղմթերիքից՝ բանջարեղեներ, կաթնամթերք, և տեղեկան

խմիչքներ, այս բոլոր վեր թվարկվածները բացառապես պետք ապահովի համայնքի բնակավայրերի արտադրանքը: Էկոճամբարում սննդի սպասարկման օբյեկտի կահավորանքը պետք է լինի փայտով, ազատ տեսադաշտով:

Անհրաժեշտության դեպքում նախատեսվում է նաև տարին մեկ անգամ լճում արհեստականորեն ավելացնել ձկների քանակը:

Էկոճամբարում մուտքը լինելու է վճարովի, վճարը կսահմանվի ըստ այցելուի անցկացրած ժամանակահատվածի:

Ծրագրով նախատեսվում է կանաչապատել ամբողջ տարածքը և զարգացնել հանգստի համար նախատեսված բոլոր օղակները: Ծրագրի նպատակը կայանում է նրանում, որ աճեցնում ենք ձկնատեսակներ վայրի լճում և հնարավորություն ենք տալիս ձկնորսներին վճարովի մուտք գործել տարածք, որը իր մեջ ներառելու է անվտանգություն, ձկան կարթ, ձուկ բռնելու և ինքնուրույն կամ մեր խոհանոցի միջոցով այն եփելու հնարավորություն: Նախատեսվում է ապահովել հանգստի համար բոլոր հարմարությունները:

Էկոճամբարի տղադիրքը նպաստավոր է, այնքանով, որ կարող է զուգորդվել նաև պատմամշակութային և ճանաչողական զբոսաշրջությամբ: Էկոճամբարը «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանից գտնվում է 4-5 կմ հեռավորության վրա 10 րոպեի ճանապարհ, իսկ Զիարատ եզդիական տաճարը գտնվում է 2 կմ հեռավորության վրա 5 րոպեի ճանապարհ: Այս երկու զբոսաշրջային օբյեկտները կարող են դառնալ համաշխարհային նշանակության օբյեկտ:

«Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը

«Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը գտնվում է Երևանից 35-40 կմ հեռավորության վրա, Տարոնիկ բնակավայրի մոտ: Արգելոց-թանգարանը բացվել է 1968թ.: Այստեղ հավաքվել և ցուցադրվել են հուշարձանից պեղված 27 000-ից ավել առարկաներ: Առաջին հարկում ցուցադրվում են ամրոցում և դամբարանադաշտում հայտնաբերված նյութերը, որոնք վերաբերում են վաղ բրոնզի դարից մինչև ուշ միջնադարին: Երկրորդ հարկում ներկայացված են հնագույն Մեծամորի արհեստներն ու ծեսերը: Նկուղային հարկում գտնվում է հատուկ

զետեղարանը, որտեղ ներկայացված են Վանի թագավորության շրջանի ոսկե, արծաթե, կիսաթանկարժեք քարերից, մածուկից պատրաստված եզակի մշակութային արժեքներ:

Մեծամորի թանգարանը Հայաստանի ամենաուշագրավ վայրերից մեկն է, ցավոք այս արգելոց-թանգարանի մասին շատերը չգիտեն: Այս պատմական հուշարձանը կարող է կարևոր տեղ ունենալ ոչ միայն Հայաստանի, այլև համաշխարհային մշակույթի պատմության մեջ: 1965 թ. մինչև այժմ Մեծամորում պարբերաբար պեղումներ են կատարվում: Պեղված մշակութային շերտերը վերաբերում են բրոնզի և երկաթի պարբերաշրջաններին: Պեղված նյութերը վկայում են, որ բրոնզի պարբերաշրջանում (մ.թ.ա. IV-II հազ.) Մեծամորը մշակույթի ծաղկուն կենտրոն էր: Լավ պահպանվել է պղնձաձուլարանի ամբողջ համակարգը՝ հալոցը և հնոցները, որոնք կառուցվել են ժայռերի մեջ: Գիտնականները պարզել են, որ Մեծամորը խոշոր բնակատեղի էր, որը զբաղեցնում էր 10,5 հա տարածք, ուներ կիկլոպյան պարսպով շրջապատված միջնաբերդ, զիկուրատ՝ «աստղադիտարան»:

Մեծամոր հնավայրից են հայտնաբերվել և «Մեծամոր» թանգարանում են ցուցադրվում Հայաստանի տարածքից հայտնաբերված ամենահին ոսկուց զարդը, սարդոնիքսե գորտ-կշռաքարը, որի վրա կա արձանագրություն սեպագիր՝ դա Բաբելոնի թագավորներից մեկինն է և թվագրվում է մ.թ.ա. 16-րդ դարով, և դա ամենահին արձանագրություններից մեկն է, որ հայտնաբերվել է Հայկական լեռնաշխարհի տարածքում: Նշենք, որ այն վայրը բավականին լուրջ հնարվորություն ունի դառնալու Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից մեկը:

Իսկ ինչպես հասնել «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան:

Լավ զարգացած ճանապարհատրանսպորտային պայմանները հնարավորություն են տալիս հասնել Մեծամորի պատմահնագիտական արգելոց-թանգարան անձնական մեքենայով կամ օգտվելով տարբեր տուրիստական ընկերությունների ծառայություններից: Մոտակա բնակավայրերում գտնվող տեսարժան վայրերի հետ կարող է ընդգրկվել մեկ երթուղու մեջ: Մեծամորի պատմահնագիտական արգելոց-թանգարանի աշխարհագրական դիրքի շնորհիվ ճանապարհը երկար չի թվա:

«Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը լինելով բրոնզի դարաշրջանի (մ.թ.ա. IV-II դդ.) մշակութային ծաղկուն կենտրոն, համեմատաբար լավ պահպանվել է և կարող է համաշխարհային ուշադրության արժանանա բազմաթիվ հնագետների համար, ինչպես նաև զբոսաշրջիկների համար: Արգելոց-թանգարանը այցելուների և զբոսաշրջիկների համար ավելի գրավիչ դարձնելու համար առաջարկվում է հին միջավայրի կենդանացում: Այսինքն արգելոց-թանգարանի տարածքում կստեղծվի այսպիսի շենքային հարմարությունները, որում հնարավորություն կստեղծվի եղած հնագույն առարկաների 3D մոդելավորմամբ կենդանություն տալ և այցելուն իրեն զգա այդ դարաշրջանում: Առաջարկվում է նաև էքսկուրսաները դարձնել աուդիո տարբերակով: Այսպիսով ստեղծվում նորարական թանգարան, որը գրավին հազարավոր օտարերկրյա այցելուներին:

Առաջարկվում Տարոնիկ բնակավայրում հատուկ ուշադրություն դարձնել հյուրընկալման օբյեկտներին և սպասարկման ենթակառուցվածքներին: «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանի այցելուների գերակշիռ մասը նախնական փուլում կլիեն հնագիտների արշավախմբեր, որոնք կարիք կունենա մոտակ բնակավայրերում գիշերակացի և սպասարկման այլ ծառայությունների, այս նպատակով նպատակահարմար է Տարոնիկ բնակավայրը ընդգրկել զբոսաշրջության կազմակերպման գործում:

«Տաուսե մալաք և յոթ հրեշտակներ» կամ Զիարատ տաճար

2019 թվականի սեպտեմբերի 29-ին Ակնալիճ բնակավայրում տեղի ունեցել եզդիական ամենամեծ տաճարի բացումն ու օծման արարողությունը: Տաուսե մալաք և յոթ հրեշտակներ կամ Զիարատ նորակառույց սրբատեղին երկրորդն է՝ Իրաքում գտնվող Լալեշի տաճարից հետո:

Տաուսե Մալակը եզդիական կրոնում ամենամեծ հրեշտակն է, բոլոր հրեշտակների գլխավորը՝ սիրամարգի տեսքով: Միշտ նրան շրջապատում են տարբեր առաքելություն ունեցող հրեշտակներ: Եվ ահա այս հավատալիքային մոտեցումը մղել է նախաձեռնել Տաուսե Մալակի տաճարի կառուցումը և անվանակոչումը:

2015 թվականի ապրիլի 22-ին համայն աշխարհի եզդիների հոգևոր առաջնորդ, նորին սուրբ մեծություն Միրա Միրե Թահսին բեգի գլխավորությամբ տեղի ունեցել տաճարի հիմնարկեքը: Եվ 3,5 տարի անց մարմարակերտ տաճարը վեր է խոյացել Մասիսների հայացքների ներքո: Եզդիական տաճարը պատահական չի, որ հայկական հողում է կառուցվել: Քանի որ Հայաստանը երկրորդ հայրենիք է դարձել տասնյակ հազարավոր եզդիների համար: Տաուսե Մալակի տաճարը ինքնատիպ մարմարակերտ կառույց է: Տաճարի բարձրութունը 29 մետր է: Տաճարը ունի մեկ մեծ և յոթ փոքր գմբեթներ, որոնք սկսվում են 8 մետր բարձրությունից: Մեծ գմբեթը բարձրանում է ևս 7 մետր ուղղագիծ, այնուհետև 11,60 մետր թեք ճառագայթների տեսքով: Այս ամենին ավելանում է ոսկեզօծ արևը, որի բարձրությունը 2,20 մետր է: Մեծ գմբեթի արևի ճառագայթների թիվը 24 է, իսկ պատուհանների թիվը՝ 8: Փոքր գմբեթների թիվը 7 է՝ մեկական պատուհանով: Յուրաքանչյուրի բարձրությունը 14,65 է՝ գումարած 1,30 մ ոսկեզօծ արևը: Արև կա և տաճարի մուտքային մասում՝ 3,20 մ տրամագծով: Տաճարը և երկու մուտք ունի՝ հյուսիսային և հարավային հատվածից, լայնությունը 18 մետր է, երկարությունը՝ 21: Տաճարի ներքին մակերեսը հասնում է 200 մետրի: Ներքին հատվածն ունի կլորավուն խորշեր, որից մեկում տեղադրված է հոգևոր հարթակ: Այստեղից արարողությունների ժամանակ բարձրաձայն աղոթքներ են հնչում: Այս հարթակում օնիքսից պատրաստած տարողության մեջ ամփոփված են սուրբ մասունքներ՝ բերված սուրբ Լալեշից: Տաճարի դռները փայտից են՝ սիրամարգազարդ՝ արևագորգազարդ, տաճարի ներսը զարդարում են հատուկ պատրաստված կախովի ջահը և պատերին ձուլված լուսատուները: Տաճար կարող են ազատ մուտք ու ելք անել նաև ֆիզիկական դժվարություններ ունեցողները: Տաճարը ունի հրաշալի բարեկարգ բակ:

ՀՀ Արմավիրի մարզում բավականին մեծ թիվ են կազմում ազգային փոքրամասնություն համարվող եզդի բնակչությունը: Հայաստանը լինելով եզդի ազգի համար հայրենիք, նրանք ունեն լիարժեք իրավունքներ իրենց մշակութային կյանքով ապրելով: Զիարատ եզդիական տաճարը այս ամենի վառ օրինակն է: Տաճարը լինելով աշխարհում երկրորդը կարող է հյուրընկալել աշխարհի տարբեր վայրում բնակվող եզդի ազգին և ոչ միայն: Այն կհատաքրքրի աշխարհի բոլոր ազգերին, քանի որ այն հադիսանում է մշակութային նոր միջավայր, որը ստեղծվել է դարերից եկած

կրոնի և սովորույթների շնորհիվ: Այն աշխարհի համար նորույթ կլինի, քանի որ ոչ բոլորն են ծանոթ եզդի ազգին, նրանց մշակույթին, կրոնին, սովորույթներին, ծիսակարգերին: Այս առումով եզդիական տաճարը կարող է դառնալ ուղղորդիչ գործիք, որը իր հոյակապ ճարտարապետական չկրկնվող տեսքի շնորհիվ գրավի զբոսաշրջիկներին: Զբոսաշրջիկները այցելելով տաճարը հնարավորություն կստանան տաճարի տարածքով շրջել և ծանոթանալ եզդի ազգի պատմությանը: Իսկ արդեն համայնքի բնակավայրերում զբոսաշրջիկները կայցելեն եզդիական ընտանիքներին և կծանոթանան նրանց կենցաղին, նիստուկացին:

Արգիշտիխինիլի

Արգիշտիխինիլի քաղաքը Վանի թագավորության վարչատնտեսական և պաշտամունքային կենտրոն:

Կառուցվել է Վանի թագավորության ընդարձակման ընթացքում՝ Անդրկովկասում՝ Արգիշտի Ա-ի թագավորի կողմից մ.թ.ա. մոտ 776 թվականին և անվանակոչվել է վերջինիս անունով: Գոյություն է ունեցել մ.թ.ա. VIII-V դարերում: Արգիշտիխինիլի քաղաքի փլատակները տեղակայված են Արմավիր քաղաքից 15 կիլոմետր՝ հարավ-արևմուտք, Ամասիա, Նոր Արմավիր, Ջրաշեն, Հայկավան և Արմավիր գյուղերի միջև: Քաղաքը կառուցվել էր Արաքսի ձախ ափի միջին հոսանքում: Այդ ժամանակներից ի վեր գետի հունը տեղափոխվել է դեպի հարավ և գտնվում է Արգիշտիխինիլիից մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

Առաջին հնագիտական ուսումնասիրությունը կատարել են Ա. Երիցյանը և Ա. Ուվարովը, 1870 թվականին: ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը 1962 թվականին Արգիշտիխինիլիում սկսեց նոր, պարբերական պեղումներ: Արգիշտիխինիլիի հիմնադրման, ինչպես նաև այնտեղ պաշտպանական, պալատական, պաշտամունքային և տնտեսական կառույցների մասին տվյալներ կան Արգիշտի Ա-ի և նրա հետնորդներ Սարդուրի Բ-ի, Ռուսա Ա-ի և Ռուսա Գ-ի 17 սեպագիր արձանագրություններում:

Պեղածո նյութերից և արձանագրություններից երևում է, որ մ.թ.ա. VIII դ. կեսին Արգիշտիխինիլին դարձել է Վանի թագավորության մշակութային-տնտեսական և

պաշտամունքային խոշոր կենտրոն: Արգիշտիխինիլի կառուցապատված մասը գրավել է շուրջ 1000 հա տարածություն, որտեղ եղել են այգիներ, բանջարանոցներ, ցանքսեր: Պեղումների ընթացքում քաղաքի բնակելի տներում հայտնաբերվել են քարե օջախներ, կավանոթներ, աղորիքներ, սանդեր, ջուլհակի գործիքներ, երկաթե մանգաղներ, դանակներ են:

Արգիշտիխինիլի քաղաքը որպես Հայկական առաջին թագավորության հնագույն քաղաքներից ունի բացարձակ էթնիկական արժեք հայի հնագույն ազգ լինելու վերաբերյալ: Քաղաքը բազմիցս ուսումնասիրվել է հնագետների կողմից, նաև պեղումներ է կատարվել, ինչպես քաղաքի բերդի տարածքում այնպես էլ մոտակ բնակավայրերում հատկապես Նոր Արմավիր բնակավայրի տարածքում, որտեղ ևս հայտնաբերվել են գտածոներ: Այս տարածքը հանդիսանում է թանգարան բաց երկնքի տակ: Նույն սկզբունքով, ինչպես «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանի դեպքում առաջարկվեց: Առաջարկվում է հարակից բնակավարերում զարգացնել սպասարկման ենթակառուցվածքները՝ գիշերակացի, սննդի ծառայությունների տեսքով: Այս նպատակով համայնքի կողմից խրախուսելի է հյուրատների բացումը: Նոր Արմավիրի բնակավայրում այսպիսի փորձերը արվում են բնակիչների կողմից:

«Որդան կարմիր» արգելավայր

«Որդան կարմիր» արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք է, ՀՀ 26 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1987-ին, ունի 200 հա տարածք՝ ՀՀ Արմավիրի մարզում՝ Արարատյան դաշտում՝ Արգավանդ, Արազափ և Ալաշկերտ գյուղերի միջև՝ ծովի մակարդակից 900-950 մ բարձրություններում: Ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատի պահպանության համար(Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ): Այստեղ պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղադիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը: Դեռևս V-րդ դարից մատենագիր աղբյուրները (Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի և ուրիշներ) վկայում են, որ Արաքս գետի երկու ափերին որդան կարմիրն այնպիսի լայն

տարածում ուներ, որ հողը տեղ-տեղ գորգի նման զարդարվում էր կարմիր նախշերով, իսկ արածող անասունների ոտքերը ներկվում էին կարմիր գույնով: Արարատյան որդանից ստացվող բնական ներկը՝ կարմինը, արևելքում հայտնի էր հայկական « կրմըզի» (հայերեն՝ գինեգույն) անունով: Ներկը ստացվում էր որդի՝ մուգ բալի գույնի անթև դանդաղաշարժ էգերից, որոնք տարվա որոշակի ամիսներին և օրվա որոշակի ժամերին հողից դուրս են գալիս՝ զուգավորվելու: Հնում որդան կարմիրով ներկված թելերով է գործվել հայ թագավորների հագուստը՝ բոսորագույն ծիրանին: Դրանից ստացվող թանաքով՝ մելանով են գրել թագավորական նամակները, կաթողիկոսական կոնդակները: Որդան կարմիրը կիրառվել է նաև միջնադարյան ձեռագրերի, մանրանկարչության, եկեղեցական պատկերազարդության մեջ: Դժբախտաբար, սինթեզված ներկերը մոռացության մատնեցին որդանաներկը: «Որդան կարմիր» պետական արգելավայր գտնվում է ՀՀ ԲՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո: Խորհրդային տարիներին արգելավայրն ունեցել է ցանկապատ, սակայն հետո թալանել, տարել են և մինչ օրս Որդան կարմիր արգելավայրը մնացել է բարձիթողի վիճակում:

Որդան կարմիր միջատը հանդիսանալով հազվագյուտ և անհետացող միջատ ընգրկված է Կարմի գրքում: Այն դարեր շարունակ եղել է հայկական մշակույթի մեջ անփոխարինելի: Արգելավայրը հանդիսանում է էկոզբոսաշրջության իրականցման լավագույն միջավայրը:

Արգելավայրը նախքան էկոզբոսաշրջային կենտրոն դարձնելը հարկավոր է.

- *Բարեկարգել արգելավայր հասնելու ուղիները*
- *Տարանջատել արգելավայրի փարածքը ցանկապատերով*
- *Մուտքի և ելքի ժամանակահատված սահմանել*

Արգելավայրի բարեկարգման աշխատանքները ավարտելուց հետո ցանկանալի է որդան կարմիրը դարձնել բրենդ համայնքի համար: Էկոզբոսաշրջային ճամբարը նախընտրելի է լինի շարժական, քանի որ այն լինելու ժամանակավոր: Իսկ էկոզբոսաշրջային տուրերի կազմակերպման կենտրոն նախընտրելի է լինի Արազափ բնակավայրում: Ավելի գրավիչ միջավայր ստեղծելու նպատակով առաջարկվում է, որ որդան կարմիրի ներկով ներկված գորգեր, մանրանկարչական իրեր լինել այդ կենտրոնին կից կառուցված փոքրիկ ինֆորմացիոն-թանգարան:

Արազափ բնակավայրի էկոզբոսաշրջային տուրերի կազմակերպման կենտրոնից տուրեր կլինեն ոչ միայն «Որդան կարմիրի» արգելավայր այլև հարևան բնակավայրեր թռչնադիտումների նպատակներով, թռչնատեսակներից հատկապես սպիտակ արագիլի դիտում:

Թռչնադիտում

Սպիտակ արագիլը Հայաստանում բնակվում է Արարատյան դաշտում, մասամբ՝ հարավարևելյան շրջաններում: Մինչև 1970-ական թվականները սպիտակ արագիլը բնադրող-չվող էր, ձկնաբուծական տնտեսությունների ստեղծմամբ այլևս չվելու կարիք չունի: Հասուն արագիլները հաղորդակցվում են կտուցի կափկափյունով, որով ասես ավետում են գարնան գալուստն ու իրենց բազմացման ժամանակը: Բնադրատեղը պաշտպանելու համար արագիլները պատրաստ են անզիջում կռվի բռնվելու և բնից անգամ անկենսունակ ձագերին դուրս նետելու: Բույնը հյուսում են ճյուղերից, խոտաբույսերից ու լաթերից՝ գյուղական տների տանիքներին, ծառերի, աշտարակների, ժայռերի վրա կամ, նույնիսկ, էլեկտրասյուների ծայրերին: Դնում են 3–7 ձու, ունենում 3–5 ձագ: Սպիտակ արագիլի զույգերն անդավաճան են մինչև կյանքի վերջը: Ձվից նոր դուրս եկած ձագերն ունակ են ձայն արձակելու, որն աստիճանաբար հետ է զարգանում: Այս ամենի դիտում և լուսանկարում մեծ բավականություն կպատճառի օտարերկրյա զբոսաշրջիկներին:

Ագրոզբոսաշրջություն

Ագրոզբոսաշրջության մեծ նախադրյալներ կան Մեծամոր համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում: Համայնքը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա:

Վերջին ժամանակներում շատ ենք լսում ագրոզբոսաշրջություն բառը, հաճախ էլ՝ Հայաստանում այն զարգացնելու անհրաժեշտության մասին: Շատերը կարծում են, որ եթե զբոսաշրջիկը գնում է գյուղ, ապա կարելի է համարել որ նա ագրոզբոսաշրջությամբ է զբաղվում: Սակայն դա այդքան էլ այդպես չէ. զբոսաշրջիկը

կարող է գնալ գյուղ և հետաքրքրված լինել գյուղում եղած որևէ մշակութային կոթողով: Ստացվեց, որ նա մշակութային տուր է ունեցել գյուղում:

Համայնքի որևէ բնակավայրում կառուցենք հյուրատուն, որը հետագայում պետք է դառնա ցանց և տարածվի համայնքի բոլոր բնակավայրերում: Սա զբոսաշրջիկին հնարավորություն կտա հետևել գյուղական կյանքին, ցանկության դեպքում մասնակցել գյուղատնտեսակն աշխատանքներին: Զբոսաշրջիկը մասնակցում է բերքահավաքի և հնարավորություն է ունենում գնել իր հավաքած բերքը, կամ էլ այցելում ֆերմաներ, որտեղ հյուրերը հնարավորություն են ստանում խաղալու ընտանի կենդանիների հետ, կամ կերակրում են նրանց, մասնակցել կաթնամթերքների արտադրությանը գյուղական պայմաններում, վայելելու իրենց հանգիստն մաքուր օդի պայմաններում: Սա անչափ հետաքրքիր է հատկապես երեխաների համար:

Բնակավայրերում ագրոզբոսաշրջությունը զարգացնելուց առաջ մենք պետք կարողանանք միջավայրը ադապտացնենք հյուր ընդունելու գործունեության մեջ, այսինքն տեղացի և զբոսաշրջիկ շփումը պետք կայանա: Զբոսաշրջիկների մինչև գյուղատնտեսությունը ճանաչելը, տեղացիները նրանց պետք ներկայացնեն բնական միջավայրը, որը ազդում է մարդկանց բնավորության վրա, որն էլ իր հերթին հետք է թողում գյուղատնտեսության, մշակույթի ու կենցաղի վրա: Այստեղ է որ խառնվում են էկո, էթնո, ագրո, մշակութային և տուրիզմի այլ տեսակները՝ տալով զբոսաշրջիկին ամբողջական պատկերացում: Այս արդյունքին կարելի է հասնել իրադարձային զբոսաշրջության՝ փառատոների և տոների միջոցով: Նախընտրելի է անցկացվի «***Բերքի տոն***» սեպտեմբերի երրորդ կրիակին: Առաջարկվում է Բերքի տոնը նշել մեկ վայրում որտեղ կներկայանան համայնքի բոլոր բնակավայրերը, յուրաքանչյուրը իր բնակավայրին բնորոշ տեսքի տաղավարներով: Տաղավարներում կլինեն բացառապես ագրո և էկո մթերք որոնք արտադրվել են իրենց բնակավայրերում:

Ագրո և էկո զբոսաշրջային փորձառության օրինակ ունեն համայնքի Գետաշեն բնակավայրի միջնակարգ դպրոցը, որը մտադիրի է նաև հյուրատներ ստեղծել բնակավայրում:

Մեծամորի երիտասարդական տուն

Մեծամորի երիտասարդական կենտրոնի գործունեությունը նպատակաուղղված է լինելու կյանքի որակի բարելավմանը, նրանց քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ու համայնքային կյանքին ներգրավմանը: Այս կենտրոնը հնարավորություն կընձեռի Մեծամոր խոշորացված համայնքի 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների համար կրթվելու նոր հմտություններ զարգացնելու, ինքնաարտահայտվելու, ազատ ժամանակը անցկացնելու և հասակակիցների հետ շփվելու համար, ինչպես նաև կդառնա նպաստող միջավայր նրանց սոցիալականցման, ապագա լիարժեք քաղաքացի դառնալուն և հետևաբար համայքներում դրական փոփոխությունների իրականացմանը: Այսօր պայմանավորված տեղեկատվական տեխնոլոգիաների մեր կյանք անարգել ներխուժմամբ, երեխաներն ու երիտասարդները զոհ են դառնում համացանցային տարբեր սպառնալիքներին: Դրան գումարվում է համացանցից կախվածությունը և ժամանակը ճիշտ պլանավորելու հմտության բացակայությունը: Կենտրոնը կարող է դրական փոփոխություններ բերել համայնքի երիտասարդների կյանք: Երիտասարդները, լինելով համայնքի սոց կապիտալ՝ կրթվելով ու զարգանալով կուժեղացնեն իրենց համայնքը:

Ծրագիրն իրենից շարունակական գործընթաց է ենթադրում, որի ընթացքում կտրամադրվեն հետևյալ ծառայությունները.

- *անհատական և/կամ խմբային երիտասարդական(սոցիալական) աշխատանք,*
- *խորհրդատվություն,*
- *կրթական ակումբների աշխատարաններ դասընթացներ մասնագիտական կողմնորոշում,*
- *ուսումնաճանաչողական այցեր,*
- *էքսկուրսիաներ, արշավներ,*
- *հանրային միջոցառումներ,*
- *Ժամանցային միջոցառումներ,*

Ծառայությունների տրամադրման արդյունքում հնարավոր կլինի ստեղծել կամավորների ցանց, որի առաջնորդ-անդամները իրենց բնակավայրերում,

սոցիալական ինստիտուտներում՝ դպրոց, ուսումնարան, քոլեջ, կամավորության սկզբունքով կկարողանան իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցել իրենց հասակակիցներին:

Որպես պիլոտային ծրագիր հնարավոր է սկսել աշխատանքը Մեծամոր քաղաքի 13-18 տարիքային միջավայրում 30 երիտասարդի հետ կամ Մեծամոր համայնքի ամեն բնակավայրից 2 երիտասարդի հետ այսինքն 60 շահառուի հետ:

Անհրաժեշտ մասնագետներ՝ (սկզբի համար)

- *Կենտրոնի պատասխանատու, համակարգող,*
- *Ֆինանսների պատասխանատու,*
- *Երիտասարդական /սոց/աշխատող,*

Կախված շահառուների քանակից մասնագետները և/կամ մասնագետների թիվը կարող է փոփոխվել:

Ծրագիրը լուծելու է հետևյալ խնդիրները.

- *Սոցիալականացում և առողջ ապրելակերպ,*
- *Աշխատաշուկայում երիտասարդների մրցունակություն,*
- *Կամավորության մշակույթի ձևավորում,*
- *Երիտասարդության հարցերի մասին իրազեկում,*
- *Երիտասարդների մասնակցությունը իրենց վերաբերյալ քաղաքականքության մշակմանը:*

Ծրագրի նպատակը/առաքելություն/ հայ ընտանիքի հզորացում, երիտասարդների մասնագիտական կողմնորոշման հնարավորության ընձեռում, կամավորության սկզբունքի ձևավորում և կարևորում: Արդյունքում կունենանք կայացած երիտասարդներ, ովքեր կլինեն քաղաքացիական հասարակության լիիրավ անդամներ, ակտիվ մասնակցություն կունենան իրենց իսկ վերաբերող քաղաքականության մշակմանը, իսկ ապագայում կունենանք անապահով ընտանիքների թվի կրճատում:

Մեծամոր համայնքի մարզահամալիր

Մեծամոր քաղաքում է գտնվում հանրապետության բազմագործառութային մարզահամալիրներից մեկը, որն ունի հիմնանորոգման կարիք: Հիմնանորոգումից հետո այն կարող է դառնալ տարածաշրջանային մարզահամալիր: Հիմնանորոգումը կարող է իրականացվել համաֆինանսավորման (սուբվենցիոն) ծրագրի միջոցով՝ մասնակից դարձնելով նաև մասնավոր սեկտորին:

Մարզահամալիրի բազմագործառութային հնարավորությունները (մեծ և փոքր լողավազաններ, մարզադահլիճներ՝ բասկետբոլի, վոլեյբոլի, ըմբշամարտի, բռնցքամարտի, թեթև ատլետիկայի) և համապատասխան մարզաձևերի գործարկումն ու վերագործարկումը Մեծամոր համայնքը կդարձնեն մարզական կենտրոն.

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝

- *Սպորտի մասսայականացումը*
- *Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ հետաքրքրության ձևավորումն ու զարգացումը ոչ միայն Մեծամոր համայնքում, այլև՝ հարակից բնակավայրերում*
- *Առողջության ամրապնդումը, անհատի ֆիզիկական և հոգևոր ներդաշնակ զարգացումը*
- *Կյանքի տևողության երկարացումը*
- *Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը*
- *Պատանիների և երիտասարդների զբաղվածության ապահովումը*
- *Ֆիզիկական ներուժով օժտված (նաև՝ հաշմանդամություն ունեցող) անձանց բացահայտումն ու ներգրավումը համայնքի/մարզի մարզական կյանքին*
- *Մարզական հերթափոխի, բարձրակարգ մարզիկների պատրաստումը*
- *Մարզական ձեռքբերումների ու հաջողությունների հասած անձանց ներդրումը՝ համայնքի, մարզի սպորտային կյանքի զարգացմանը*
- *Միջհամայնքային մարզական կապերի ամրապնդումը*
- *Առողջ մրցակցության ձևավորումը*

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները

- ✓ *Վերանորոգել փանիքները*
- ✓ *Ստեղծել և գործարկել ջեռուցման համակարգը*
- ✓ *Վերանորոգել մարզադահլիճները*
- ✓ *Վերանորոգել և վերագործարկել մեծ լողավազանը*
- ✓ *Կառուցել բնական խոտածածկով ֆուտբոլի մարզադաշտ*
- ✓ *Կառուցել վազքուղիներ*
- ✓ *Ձեռք բերել համապատասխան գույք*
- ✓ *Ձեռք բերել մարզագույք՝ ըստ մարզաձևերի*

Որպես շահառուներ կարող են հանդես գալ ոչ միայն Մեծամոր համայնքի, այլև Արմավիրի մարզի այլ համայնքների բնակիչները: Մարզահամալիրի ծառայությունները կլինեն ավելի մատչելի, քան մասնավոր մարզակենտրոններում է:

Մեծամոր համայնքում գյուղատնտեսական մանրածախ և մեծածախ շուկա

Մեծամոր խոշորացված համայնքում գյուղատնտեսական արտատադրանքի մեծածախ և մանրածախ վաճառքը խթանելու, ինչպես նաև փողոցային առևտուրը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է կառուցել շուկա, որտեղ մի կողմից գյուղական բնակավայրերի բնակչությունը հնարավորություն կունենա իրացնել գյուղատնտեսական արտադրանքը, մյուս կողմից բնակչությունը հնարավորություն կունենա ձեռք բերել գյուղատնտեսական արտադրանքը անմիջապես արտադրողից՝ ավելի հարմար պայմաններով:

Գյուղատնտեսական շուկայում տեղակայված են լինելու տաղավարներ, ոտեղ կարող են ներկայացվել անմիջապես գյուղատնտեսներից տարատեսակ ապրանքներ՝ միրգ, բանջարեղեն: Շուկայի ստեղծման հիմնական նպատակը համայնքի բնակիչների համար իրենց ապրանքը իրացնելու համար հարմար պայմանների ստեղծումն է:

ՀՀ օրենքը արգելում է բացօթյա տարածքներում առևտուրը, ծրագրի իրագործման արդյունքում կխուսափենք համայնքի տարածքում խախտումների գրանցումից: Այն կբերի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը. Մեծամոր

խոշորացված համայնքի բնակիչները իրենց անհրաժեշտ գյուղատնտեսական ապրանքը ձեռք կբերեն շուկայական գնով, այլ ոչ թե վերավաճառողից.

Նախատեսվում է համայնքային սեփականություն հանդիսացող 10000 քառ. մ. հողատարածքը տրամադրել գյուղատնտեսական շուկայի կառուցման համար:

Տարածքը ասֆալտապատել, անցկացնել լուսավորության ցանց, կառուցել ծածկ և տաղավարներ՝ հարմարավետ գործունեություն ապահովելու նպատակով:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա գյուղատնտեսական շուկա, որը կծառայի քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչությանը ինչպես նաև կկարողանա եկամուտ ապահովել համայնքի բյուջեի համար:

Ծրագրի շահառուները Մեծամոր խոշորացված համայնքի բնակիչներն են , ինչպես նաև հարակից բնակավայրերի բնակիչները:Մեծամոր խոշորացված համայնքը նպատակ ունի շուկայից ստացված եկամուտը ուղղելու համայնքի զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացմանը:

Սպանդանոցների կառուցում

Սպանդանոցները հանդիսանում են մսի արտադրության առաջնային օղակը, նրանց կառուցման և գործարկման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, որոնք առնչվում են ինչպես տնտեսական, այնպես էլ անասնաբուժասանիտարական, էկոլոգիական և նույնիսկ էթիկայի ոլորտներին:

Կենդանիների մորթը սպանդանոցներում կազմակերպելու և սպանդանոցային մորթը խրախուսելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 9-ի «Պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտներին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 10 արձանագրությամբ սահմանվել են նաև մարզերը, որտեղ ըստ ժամանակացույցի պետք է կատարվի սպանդանոցային մորթ:

Սպանդանոցների անհրաժեշտ քանակության մեջ՝ ըստ մարզերի և տարածաշրջանների հաշվարկելու ընթացքում հիմք է ընդունվել ինչպես մարզում առկա գյուղատնտեսական կենդանիների քանակը, նաև տվյալ տարածաշրջանի

հեռավորությունը արդեն առկա սպանդանոցներից և մեծ բնակավայրից: Հաշվարկները կատարվել են հիմք ընդունելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալները՝ կապված գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի հետ: Սպանդի ենթակա կենդանիների գլխաքանակը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով տարբեր կենդանատեսակների սպասվելիք ծինը տարվա կտրվածքով:

Բերված թվերը իրենցից ներկայացնում են միջինացված օրական ցուցանիշները, որոնք, սակայն, առանձին ամիսների ընթացքում կարող են փոփոխվել՝ կապված մորթի սեզոնային առանձնահատկություններից:

Սպանդանոցին հարկավոր է 0,05 հա տարածք, որի լիարժեք կառուցման համար:

Աշխատակազմի տարածքային արխիվ

Համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքերի բնագավառում որպես սեփական լիազորություն կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը: Պետական և համայնքային արխիվներն ստեղծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանած կարգով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները և կազմակերպությունները, իրենց գործունեության ընթացքում առաջացած արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով մինչև պետական կամ համայնքային արխիվ մշտական հանձնելը պարտավոր են ստեղծել աշխատակազմի արխիվներ:

Ծրագրի շրջանակներում կապահովի համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը:

1. Կառուցել արխիվի վարչական շենք
2. Ձեռք բերել համապատասխան վարչական գույք
3. Արխիվային փաստաթղթերի պահպանության համար անհրաժեշտ ջերմախոնավային և սանիտարահիգենիկ պայմանների ստեղծում

4. Արխիվային փաստաթղթերի պահպանություն՝ փստաթղթերի նպատակային տեղաբաշխման և պահպանության տեղաբաշխման և պահպանության ապահովման, բարենպաստ պայմանների ստեղծման, նորմատիվ պայմանակարգի/ռեժիմի/ պահպանման, կորուստների կանխարգելման և պահպանվածության վիճակի ապահովման ու դրա վերահսկման, ապահովագրական և օգտագործման ֆոնդերի ստեղծման նպատակով պատճենահանման, վնասվածության և արտաքին հատկանիշների փոփոխության դեպքում դրանց վերականգնման և վերանորոգման միջոցառումների իրականացում:
   - *Արխիվային հավաքծուի փաստաթղթերի և արխիվային այլ փաստաթղթերի համալրում, հաշվառում, պահպանում,*
   - *Բնակիչների սոցիալական ապահովությանը վերաբերող և սահմանված կարգով ձևավորված արխիվային տեղեկանքների կամ արխիվային այլ փաստաթղթերի պատճենների անվճար տրամադրում:*

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված գործառույթների կատարման համար սպասարկման կենտրոն

Սպասարկման կենտրոնը՝ կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման և դրանից բխող այլ գործառույթների իրականացման համար դիմումների լրացումը, կից ներկայացվող փաստաթղթերի ընդունումը, դրանց մուտքագրումը էլեկտրոնային կառավարման համակարգ և գործակալության կողմից դիմումի քննարկման արդյունքում ձևավորված փաստաթղթի տրամադրումը ապահովում է խորհրդատվություն դիմողի առաջադրած հարցի կապակցությամբ, ինչպես նաև պահանջվող գործառույթների իրականացման հետ կապված նրանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ:

Համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում որպես սեփական լիազորություն կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեությունը համայնքներում:

Սպասարկման կենտրոնների տարածքները սահմանվում են բնակչության քանակի, գործարքների, հաճախորդների ակտիվության վրա հիմնված տարածքային բաժանման սկզբունքով, իսկ սպասարկման կենտրոններին առաջադրվող նվազագույն պահանջները և գտնվելու վայրերի չափանիշները՝ քաղաքացիների հարմարավետության, հերթերի արդյունավետ կառավարման, անվտանգության ապահովման, ժամանակի արդյունավետության սկզբունքների հիման վրա:

Ծրագրի շրջանակներում համայնքի բնակիչներին կտրամադրվի անհրաժեշտ խորհրդատվություն, դիմումների ընդունում, այդ գործառույթների ընթացքում կազմված փաստաթղթերի տրամադրում,

- *ամուսնության գրանցում,*
- *ամուսնալուծության գրանցում*
- *ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք*
- *ծննդյան գրանցում*
- *որդեգրում*
- *հայրության որոշում*
- *անվանափոխում*
- *մահվան գրանցում*
- *կրկնօրինակների և տեղեկանքների տրամադրում*

Անհարժեշտ է կառուցել վարչական շենք, ձեռք բերել համապատասխան վարչական գույք, արխիվային փաստաթղթերի պահպանության համար անհրաժեշտ ջերմախոնավային և սանիտարահիգենիկ պայմանների ստեղծում:

Սպասարկման կենտրոնի ստեղծման արդյունքում կպահովի քաղաքացիների հարմարավետությունը, հերթերի արդյունավետ կառավարումը, անվտանգության ապահովումը, ժամանակի արդյունավետությունը:

Համայնքների զարգացման գերակայությունները բազմաթիվ են: Բյուջեի միջոցներով ամեն տարի իրականացվել են տարատեսակ աշխատանքներ, սակայն որոշ խնդիրների լուծումը պահանջում է համակարգային բարեփոխումներ: Գալիք հինգ տարիների ընթացքում համայնքում և բնակավայրերում նախատեսվում է իրկանացնել մի շարք ծրագրեր: Դրանք են՝

1. Հանրապետական և մարզային ծրագրերի շրջանակներում շարունակելով իրականացնել բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում, որը հնարավորություն կտա պահապանել քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները և գույքը, ինչպես նաև բարեկեցիկ ապրելու հնարավորությունը: Համայանքի բնակչությանը առնչվող հաջորդ խնդիրը դեռ խորհրդային տարիներից ժառանգություն ստացած վերելակային խնդիրն է, և դա ուղիղ իմաստով կապված է առողջության հետ: Մեծամոր համայնքի բազմաբնակարան շենքերում շահագործման ժամկետը սպառած վերելակների փոխարինումը նորով առաջնահերթություն է: Վերելակային տնտեսության արդիականացումը թույլ կտա համայնքի բնակիչներին ապահով երթևեկել չվախենալով իրենց և իրենց ընտանիքի անդամների կյանքի համար:
2. 2022-2026 թվականների ընթացքում նախատեսվում է Մեծամոր խոշորացված համայնքի և այլ աղբյուրների միջոցով իրականացնել համայնքային ենթակայության մանկապարտեզների հիմնանորոգում, ջեռուցում և գազաֆիկացում: Ծրագիրը կունանա դրական ազդեցություն, ապահովելով համայնքում մանակապարտեզների շարունակական գործունեությունը ամբողջ ընթացիկ տարում, իսկ շահառուները կլինեն փոքրահասակ երեխաներն ու նրանց ծնողները, քանի որ ձմեռային սեզոնին համայնքի մանկապարտեզներում գործունեության դադարեցման պատճառով ծնողները աշխատելով ատոմային էլեկտրոկայանում և այլ կազմակերպություններում, նրանց համար դժվարություն է դառնում իրենց երեխաների օրվա ընթացքում մնալու տեղի և խնամքի հարցը: Ծրագրի հիմնական նպատակն է շենքերի վերանորոգմամբ երեխաների համար ստեղծել շենքային բարենպաստ պայմաններ՝ սանիտարահիգիենիկ նորմերի ապահովմամբ: Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք

բարեկարգված մանկապարտեզներ, նոր և գեղեցիկ կահույք, որոնք երեխաների և բնակիչների համար կծառայեն երկար տարիներ: Ծրագրի իրականացման միջնաժամկետ արդյունքում կունենանք հիմնանորոգված մանկապարտեզներ և մանկապարտեզներին հարող բարեկարգված տարածքներ, որի հետագա շահագործումը կլինի արդյունավետ: Նշված նախադպրոցական հաստատությունների շենքերը կապահովագրվեն հետագա քայքայումից, կլինեն ավելի անվտանգ, ավելի հարմարավետ և ժամանակակից:

3. Համայնքի և պետական բյուջեի միջոցներով նախատեսվում է Մեծամոր համայնքի մի շարք բնակավայրերի /ք. Մեծամոր, Տանձուտ, Հայկավան, Երասխահուն, Վարդանաշեն, Զարթոնք, Արտաշար, Տարոնիկ, Մրգաշատ, Արմավիր գ., Արգավանդ, Բամբակաշատ, Արազափ/ թվով 18 ոռոգման խորքային հորերի ցանցի վերականգնում և դա կրելու է շարունակական բնույթ:Ծրագրի իրականացումը կապահովի համայնքում կանաչապատ տարածքների ոռոգումը և ընդլայնումը ինչպես նաև կապահովի բնակավայրերի անխափան աշխատող խորքային հորերի համակարգ, ջուրը խնայողաբար օգտագործելու հնարավորություն՝ միաժամանակ ապահովելով գյուղացիական տնտեսությունների պահանջարկը: Բնակիչների համար կստեղծվեն ավելի նպաստավոր պայմաններ:
4. Նախատեսվում է համայնքի միջոցով իրականացնել համայնքային, բնակավայրային և ներհամայնքային ճանապարհների մասնակի և կապիտալ վերանորոգման աշխատանքներ, համաձայն որի Մեծամոր խոշորացված համայնքը կունենա առավել բարեկարգ ճանապարհներ և կրկին որպես ծրագրի շահառուներ հանդես կգան համայնքի և բնակավայրերի բնակիչները:
5. Ցանկալի է նաև իրականացնել Մեծամոր համայնքում մարզահամալիրի մասնակի նորոգման և ֆուտբոլի դաշտի նորոգման աշխատանքներ, որի ազդեցությունը համայնքի վրա կլինի՝ համայնքի երիտասարդ սերնդի առողջ ապրելակերպի խթանումը և նրանց ներգարվումը սպորտային միջոցառումներին:

6. Հարկ է նշել, որ Հայաստանում տնային տնտեսությունների 90 տոկոսից ավելին բնական գազն օգտագործում է որպես ջեռուցման և սննդի պատրաստման միջոց, հետևաբար համայնքի և բնակավայրերի բնակիչների համար գազաֆիկացման խնդիրը առավել կարևոր է, և հետևաբար չունենալով գազաֆիկացման խնդիր բնակիչները ավելի արդյունավետ կօգտագործեն իրենց ժամանակը, իսկ երեխաները կկարողանան ապահով և տաք միջավայրում ապրել:
7. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային ենք համարում իրականացնել բնակավայրերում նախադպրոցական հաստատությունների, երաժշտական դպրոցների վերանորոգումը, ջեռուցման համակարգի կառուցումը, ինչպես նաև մշակույթի տան վերանորոգում, որոնք առավել անմխիթար վիճակում են գտնվում: Հասարակական շենքերի վերականգնումով է պայմանավորված մի շարք սոցիալական խնդիրների լուծումը՝ այդ թվում, բարենպաստ միջավայրի ստեղծումը, բավարարված կլինեն երեխաների նվազագույն անհրաժեշտ կարիքները՝ երեխաների ապահով և անվտանգ կյանքը, որը հիմնովին կփոխվի հատկապես ձմռան ցուրտ ամիսներին: Ծրագիրը նպատակ ունի ապահովել երաժշտական դպրոց հաճախող երեխաների կենսական շահերը և բարեկեցությունը՝ երաշխավորելով նրանց կյանքի որակի բարելավումը և ստեղծագործելու հնարավորությունը:

Համայնքի՝ ըստ առանձին ոլորտների առաջնահերթ նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Տարածքային զարգացում, քաղաքաշինություն

Հիմնահարցեր

1. Անբարեկարգ բակային տարածքներ,
2. Բնակչության համար նոր հանգստի գոտիների ստեղծում,
3. Արտաքին լուսավորության ցանցի մաշվածություն,
4. Կանգառասրահների կահավորվածության ոչ բավարար վիճակ:

Նպատակ

Ապահովել համայնքի կայուն քաղաքաշինական ներդաշնակ զարգացում:

Խնդիրներ

1. Նոր զբոսայգիների հիմնադրում և կանաչ տարածքների վերականգնում,
2. Նոր մանկական խաղահրապարակների և բացօթյա սպորտային հրապարակների ստեղծում,
3. Բնակելի թաղամասերի բակային տարածքների բարեկարգում,
4. Շուկայական առևտուրը և սպասարկումը ավելի քաղաքակիրթ, հարմարավետ դարձնելու համար համապատասխան առանձնացված տարածքներում տեղադրել քաղաքաշինական նորմերին և սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող առևտրի տաղավարներ կամ շարժական ցուցափեղկեր,
5. Բակային տարածքների, հենապատերի նկարազարդում և գեղագիտական ձևավորում,
6. Հենապատերի կառուցում, վերականգնում և ձևավորում,
7. Հասարակական տրանսպորտի կանգառների կառուցում,տեղեկատվական վահանակների տեղադրում,
8. Բնակավայրային երթուղիների սպասարկման համար ավտոբուսների ձեռք բերում,
9. Քաղաքի կենտրոնական տարածքի հիմնանորոգում, արդիականացում,

10. Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգում,
11. Համայնքի տոնական ձևավորման տարրերի ձեռք բերում, մոնտաժում և տեղադրում:

Բնակարային-կոմունալ տնտեսություն

Հիմնահարցեր

1. Բազմաբնակարան շենքերի տանիքների, տանիքների ջրհորդանների, շենքերը սնուցող ջրագծերի, կոյուղագծերի, շքամուտքերի անբավարար վիճակ,
2. Բնակչությանը մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ,
3. Փողոցների սանմաքրման վատ վիճակ,
4. Մակերեսային ջրերի հեռացման անբավարար վիճակ,
5. Ջրամատակարարման համակարգի անբավարար վիճակ,
6. Գերեզմանատների պահպանության անբավարար վիճակ,
7. Հիմնական բնակարանային ֆոնդի մաշվածություն:

Նպատակ

Բարելավել համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների և ենթակառուցվածքների վիճակը: Ապահովել բնակչությանը մատուցվող ծառայությունների բարձր մակարդակ:

Խնդիրներ

1. Սանիտարական մաքրման և աղբահանության բարեփոխումների իրականացում,
2. Նոր աղբահավաք մեքենաներով և տեխնիկայով վերազինում,
3. Աղբավայրի արտոնագրում, ցանկապատում, աղբատար մեքենաների աղտահանման պայմանների ստեղծում,
4. Գերեզմանատների բարեկարգում և հսկողություն,
5. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում,
6. Բնակելի շենքերի վերելակների ամենամյա տեխնիկական անվտանգության փորձաքննություն,

7. Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման որակի բարելավում, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի ընդլայնում,
8. Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի հետագա շահագործման խնդիրների կարգավորում,
9. Չլուսավորվող փողոցների, նրբանցքների, մայթերի, բակերի և խաղահրապարակների լուսավորում,
10. Լուսավորության ցանցի ավտոմատացման, նոր տրանսպորտա- տեխնիկական սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրում,
11. Լուսավորության համակարգի սպասարկում:

Քաղաքաշինություն և հողաշինություն

Հիմնահարցեր

1. Համայնքի անշարժ գույքի/ հողեր, շենք-շինություն/ ոչ նպատակային օգտագործումը,
2. Ինքնակամ շինություններ առկայությունը /համայնքային հողերի զավթում/,
3. Հողերի սահմանազատման խնդիր, կադաստրային քարտեզի ուղղում,
4. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման շրջանակներում չհասցեավորված շենք-շինությունների և հողամասերի հասցեավորում, կադաստրային ծածկագրերի ուղղում,
5. Բակային տարածքներում ինքնակամ կառույցների առկայությունը,
6. Կցակառույցների խնդրի առկայություն,
7. Տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում,
8. Համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների և հողամասերի վարձակալության դրույքաչափերի համապատասխանեցում Մեծամոր ավագանու կողմից սահմանված չափերին:

Նպատակ

Համայքնում պետք է իրականացնել համայնքի սեփականությունը հանդիսացող շենքերի և շինությունների արդյունավետ կառավարում, արտադրական հողերի վերահսկողություն, աշխատանքների արդյունավետ համակարգում, օրինազանց քաղաքացիների հետ բանակցությունների վարում:

Գյուղատնտեսություն

Հիմնահարցեր

1. Գյուղացիական տնտեսությունների անբավարար վիճակ,
2. Տեխնիկայի բացակայություն,
3. Ցածր բերքատվություն,
4. Ոռոգման սակավաջրություն,
5. Հողերի աղակալում,
6. Դաշտամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ,
7. Տոհմային անասնապահության բացակայություն,
8. Գյուղմթերքների իրացման և վերամշակման հնարավորությունների բացակայություն,
9. Հողային հունով ջրանցքների փոխարինումը կիսախողովակներով:

Նպատակ

Գյուղատնտեսությունը դարձնել համայնքի տնտեսության գերակա ուղղություն և նպաստել նոր տեխնոլոգիաների (նոր սերնդի կաթիլային համակարգ, հակակարկտային ցանցեր, ոռոգման ցանցում կիսախողովակներով ջրանցքների կառուցում, որոգման ջրի կորստուտների պակասեցում) ներդրումը գյուղատնտեսության ոլորտ:

Խնդիրներ

1. Բնակավայրերում խորքային հորերի հորատում, ջրագծերի արդիականացում՝ կիսախողովակներով և խողովակներով,

2. Ապահովել գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործումը,
3. Խթանել նոր սերնդի կաթիլային համակարգերի ,
4. Հակակարկտային կայանների ձեռքբերում,
5. Ձկնաբուծության զարգացում,
6. Ջերմատների որակի բարձրացմանը նպաստել,
7. Աջակցել ինտեսիվ այգիների ստեղծմանը և հետագայում նաև այիների և բերքի ապահովագրման համակարգի ներդմանը,
8. Գյուղմթերքների վերամշակմամբ և անասնապահությամբ զբաղվող քաղաքացիների համար կազմակերպել սեմինար-դասընթացներ՝ կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
9. Խթանել տոհմային անասնաբուծությանը,
10. Աջակցել խելացի անսնագոմերի կառուցմանը,
11. Կերային բազայի ամրապնդում, ցանովի խոտաբույսերի ցանքատարածությունների ընդլայնում, մշակաբույսերի նոր տեսակների ներդրում,
12. Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում, գյուղատնտեսական տեխնիկայի պարկի ստեղծում:

Կրթություն

Հիմնահարցեր

1. Համայնքի մանկապարտեզների շենքերի, բակերի, խաղահրապարակների հիմնանորոգման անհրաժեշտություն,
2. Գույքի, մեթոդական և ծրագրային նյութերի պակաս,
3. Մանկապարտեզների բացակայություն գյուղական 15 բնակավայրերում,
4. Մանկապարտեզի մանկավարժների վերապատրաստում:

Նպատակ

Բարելավել մանկապարտեզներում հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերման որակը, ապահովել նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը:

Խնդիրներ

1. Բարձրացնել նախադպրոցական հաստատությունների որակն ու դերը,
2. Վերանորոգման կարիք ունեցող մանկապարտեզների շենքերի վերանորոգում և հիմնանորոգում,
3. Գույքի նորացում, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների հնարավորինս ներդրում մանկապարտեզներում,
4. Գյուղերի համար կառուցել մանկապարտեզներ,
5. Ապահովել բնակավայրի երեխաների տրանսպորտային միջոցով տեղափոխումը իրենց բնակավայրից դեպի այն բնակավայր որտեղ կա մանկապարտեզ և հակառակը (միջնաժամկետ):

Մշակույթ

Մեծամորի Շ.Ազնավուրի անվան և Արմավիր գյուղի արվեստի դպրոցներ

Հիմնահարցեր

1. Շենքերի վերանորոգման, ջեռուցման և գույքի անհրաժեշտությունը,
2. Խմբակների տեսակների սակավությունը,
3. Մասնագետների պակաս:

Նպատակ

Բարելավել երեխաների գեղագիտական դաստիարակության կազմակերպումն ու կրթական ծրագրերի իրականացման որակը:

Խնդիրներ

1. Գյուղական բնակավայրերում բացել արվեստի դպրոցի մասնաճյուղեր,
2. Ավելացնել արվեստի խմբակների տեսակների քանակը,

3. Բարձրացնել գեղարվեստի դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների որակը,
4. Ներհամայնքային ցուցահանդեսների կազմակերպում,
5. Մարզային, հանրապետական և միջազգային միւոցառումների, մրցույթների մասնակցություն:

Արևիկի, Մրգաշատի, Ալաշկերտի և Նալբանդյանի երաժշտական դպրոցներ

Հիմնահարցեր

1. Շենքերի վերանորոգման, ջեռուցման և գույքի անհրաժեշտությունը,
2. Խմբակների տեսակների սակավությունը,
3. Երաժշտական գույքի և մասնագետների պակաս:

Նպատակ

Բարելավել երաժշտական կրթության ապահովման պայմանները և կազմակերպումը, բարձրացնել դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների որակը:

Խնդիրներ

1. Գյուղական բնակավայրերում բացել երաժշտական դպրոցի մասնաճյուղեր,
2. Բարձրացնել երաժշտական դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների որակը,
3. Երաժշտական միջոցառումների կազմակերպում,
4. Ակտիվ համագործակցություն,
5. Մասնակցություն մրցույթ-փառատոներին:

Մեծամոր, Այգեշատ, Արմավիր և Նոր-Արմավիր գրադարանների կենտրոնացված համակարգ

Հիմնահարցեր

1. Գրադարանային ֆոնդի պակաս,
2. Նոր գրականության բացակայություն,
3. Անհրաժեշտ գույքի և գրադարանային սարքերի ու պարագաների պակաս,

4. Նորարական ենթակառուցվածքներով հագեցվածության անհրաժեշտություն,
5. Գրադարանավարների վերապատրաստում:

Նպատակ

Բարելավել բնակչության գրադարանային-մատենագիտական սպասարկման մակարդակը:

Խնդիրներ

1. Ապահովել գրադարանային ֆոնդը,
2. Ձեռք բերել գույք, տեխնիկա,
3. Բարձրացնել գրադարանի կողմից մատուցվող ծառայությունների որակը,
4. Գյուղական բնակավայրերում ստեղծել միասնական էլեկտրոնային գրադարան,
5. Ստեղծել գրական ակումբներ:

Մանկական զբոսայգիների և պուրակների

Հիմնահարցեր

1. Ծառուղիների անբավարար քանակ,
2. Խաղասրահի անմխիթար վիճակ,
3. Նոր ժամանակակից կարուսելների և ատրակցիոնների պակաս,
4. Առկա իրավիճակի փոփոխման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Բնակչության և զբոսաշրջիկների ակտիվ հանգստի կազմակերպման բարելավում:

Խնդիրներ

1. Մանկական զբոսայգու խաղասրահի հիմնանորոգում,
2. Զբոսայգու բարեկարգում, արդիականացում,
3. Բարձրացնել մանկական զբոսայգում մատուցվող ծառայությունների որակը:

Մշակույթի տներ

Հիմնահարցեր

1. Մշակույթի տների շենքի հիմնանորոգում և վերանորոգում,
2. Գույքի անբավարար վիճակ,
3. Ջեռուցման բացակայություն,
4. Մշակույթի տների անվանակոչում:

Նպատակ

Զարգացնել համայնքի մշակութային կյանքը:

Խնդիրներ

1. Վերանորոգել մշակույթի պալատի շենքը՝ ջեռուցման համակարգի ներդրում, համալրել նոր գույքով,
2. Գյուղերում ստեղծել հասարակական միջոցառումների և նախաձեռնությունների կենտրոն,
3. Միջոցառումների կազմակերպում,
4. Ստեղծել միջավայր հյուրախաղերի համար,
5. Ստեղծել համագործակցության միջավայր,
6. Աջակցել նախաձեռնողներին:

«Մեծամոր» պատմահնագիտական» արգելոց-թանգարան

Հիմնահարցեր

1. Շենքային պայմանների և ցուցադրության ձևի փոփոխման անհրաժեշտություն:

Նպատակ

Թանգարանն ընդգրկել հանրապետության զբոսաշրջության տարբեր երթուղիներում, այն դարձնել հետաքրքրաշարժ և գրավիչ:

Խնդիրներ

1. Թանգարանի ընթացիկ նորոգման աշխատանքներ,

2. Փոփոխել թանգարանի կողմից մատուցվող ծառայությունների որակը,
3. Թանգարանը դարձնել նորարական ենթակառուցվածքներով թանգարան:

Զբոսաշրջություն

Հիմնահարցեր

1. Տեսարժան վայրերի սահմանափակ քանակ,
2. Հյուրընկալության ոլորտի մասին հավաստի և ամբողջական տեղեկատվության պակաս,
3. Կողմնորոշումը ագրոհանգստի վրա,
4. Ժամանցի և զվարճությունների վայրերի բացակայություն,
5. Մշակութային միջոցառումների կազմակերպման և տարածման մասին տեղեկատվության պակաս,
6. Համայնքում տեղեկատվական կետերի բացակայություն:

Նպատակ

Պահպանել զբոսաշրջային գրավչությունները, վերականգնել հյուրասիրության ավանդույթները, բարելավել հյուրընկալման ծառայությունների որակը, թաղամասերը, զբոսաշրջային կառույցները և ենթակառուցվածքները, խրախուսել մասնավոր հատվածի մասնակցությունը զբոսաշրջության ոլորտ:

Խնդիրներ

1. Հիմնել համայնքային զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Մեծամորի և հարակից տարածքների համար,
2. Ստեղծել այցելուների կենտրոն «Որդան կարմիր» արգելավայրի հարակից բնակավայրում,
3. Զարգացնել վեբ և մոբայլ հավելվածները՝ զբոսաշրջության ոլորտի խթանման համար,
4. Քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցության ընդլայնում,
5. Ստեղծել և տարածել տուրիզմին և բիզնեսին վերաբերվող ամբողջական տեղեկատվական բազա,

6. Պատրաստել գովազդային հոլովակներ, տպագրել բուկլետներ և արտաքին գովազդային պաստառներ,
7. Կառուցել բազմաֆունկցիոնալ կանգառներ տեղացի արհեստավորների և փոքր ձեռնարկատերերի համար, տրամադրել տարածք, որտեղ նրանք կարող են ցուցադրել իրենց աշխատանքները և վաճառել իրենց արտադրանքը,
8. Բարեկարգել երթուղիները և տեղադրել զբոսաշրջիկներին կողմնորոշող ցուցանակներ,
9. Փողոցներում կողմնորոշող ցուցանակների տեղադրում առավել կարևորություն ներկայացնող տեսարժան վայրերի նկարներով, մատնանշելով ճանապարհային ուղղությունները,
10. Բերքի տոնի և այլ միջոցառումների կազմակերպում:

Առողջապահություն, ֆիզական կուլտուրա և սպորտ մարզահամլիր

Հիմնահարցեր

1. Շենքի վերանորոգում,
2. Թույլ գույքային բազա,

Նպատակ

Ապահովել քաղաքի մարզական կյանքի բնականոն զարգացումը:

Խնդիրներ

1. Մեծամոր սպորտհամալիրի վերանորգում,
2. Նոր մարզագույքի ձեռք բերում,
3. Խմբակների բացում,
4. Համայնքի երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպատակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում,
5. Գյուղական բնակավայրերում բացել սպորտային խմբակներ,
6. Պահպանել մարզահամալիրի կողմից սաներին մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

Սոցիալական ոլորտ

Հիմնահարցեր

1. Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցման անհրաժեշտություն,
2. Հաշմանդամների սոցիալական ինտեգրման ծրագրերի ոչ բավարար քանակ,
3. Զբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորման և գործազրկության մակարդակի նվազում:

Նպատակ

Նպաստել սոցիալական խնդիրների լուծմանը համայնքում:

Խնդիրներ

1. Տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի կապակցությամբ միջոցառման կազմակերպում,
2. Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ հաշմանդամների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին օժանդակության ցուցաբերում,
3. Ապահովել Բարեգործական ճաշարանի անվճար սնունդ ծրագրին համայնքային ամենամսյա մասնակցությունը,
4. Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի կապավցությամբ նվերների տրամադրում,
5. Դրամական օժանդակություններ սոցիալական գործընկեր ՀԿ-ներին՝ համատեղ ծրագրերի իրականացում:

Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ

Հիմնահարցեր

1. Կառավարման ապարատի բարելավման և զարգացման անհրաժեշտություն,
2. Բնակչության որոշ մասի անտեղյակություն իր հարկային պարտավորությունների մասին,

3. ՏԻՄ-բնակչություն թույլ կապ,
4. Եկամուտների հավաքագրման անբավարար մակարդակ և հաշվառման բացթողումներ,
5. Գույքահարկի և հողի հարկի բազայի անճշտությունների առկայություն:

Նպատակ

Կազմակերպել և վերահսկել համայնքի բնականոն գործունեությունը: Բարելավել բնակչությանը տրվող տեղեկատվության մակարդակը, ակտիվացնել ՏԻՄ-ի և բնակչության կապը, համայնքապետարանի աշխատանքը դարձնել թափանցիկ ու հասկանալի:

Խնդիրներ

1. Օգտագործելով տեղական լրատվության միջոցները՝ իրազեկել ազգաբնակչությանը համայնքի բյուջեի ձևավորման գործընթացում իր հարկային պարտավորությունների կատարման նշանակության մասին,
2. Համայնքային թերթի տպագրում,
3. Լուսաբանել համայնքի ղեկավարի և ավագանու գործունեությունը,
4. Աշխատակիցների վերապատրաստում, հանդիպումների կազմակերպում, տեղեկատվական թերթիկների պատրաստում,
5. Գույքի, սարքավորումների ձեռք բերում,
6. Պահպանել կառավարման ապարատի առկա իրավիճակը,
7. Տարեմուտի, Բանակի օրվան, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվան, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան և Կանանց միջազգային տոնին, Հայաստանի անկախության օրվան նվիրված ամենամյա մշակութային միջոցառումների իրականացում,
8. Համայնքում միջոցառումների կազմակերպում, համայնքի երաժշտական դրպոցի, արվեստի դպրոցի սաների մասնակցությամբ, ցուցադրելով նրանց աշխատանքները, ֆոտոցուցահանդեսի կազմակերպում որևէ թեմայով, հետաքրքիր միջոցառումների շարք,
9. Համայնքապետարանում ստեղծել «թեժ գիծ» զբոսաշրջիկների առաջարկների և գանգատների համար,

10. Շարունակել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ ֆինանսական միջոցների ներգրավում, դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն,
11. Տարին ամփոփելու համար կազմակերպել ամենամյա մրցույթ, որտեղ համապատասխան ժյուրին կորոշի համայնքի տարվա լավագույն ռեստորանային համալիրը, հյուրանոցը, առևտրի սպասարկման օբյեկտը և այլն:

2.3 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեն կազմված է եկամտային և ծախսային մասերից:

Եկամուտներն են ՝ 2627900, 3 հազ. դրամ :

1. Անշարժ գույքի հարկ- 274489,0 (10,4 %)
2. Գույքահարկ՝ փոխադրմիջոցներից- 441090, (016,8 %)
3. Տեղական տուրքեր և վճարներ- 202324,0 (7,7 %)
4. Այլ եկամուտներ- 10000, 0 (0, 4 %)
5. Պաշտոնական դրամաշնորներ- 1582697, 3 (60, 2 %)

Համայնքի բյուջեի եկմուտների մեջ սեփական եկամուտները կազմում են 1045203,0 հազ. դրամ:

1. Անշարժ գույքի հարկը- 26,3 %
2. գույքահարկ փոխադրամիջոցներից- 42,2 %
3. տեղական տուրքեր և վճարներ- 19,4 %
4. այլ եկամուտենր- 1,0 % -ը:

Դրանց հավաքագրումը կազմակերպվում և իրականացվում է համայնքապետարանի, առևտրի և սպասարկման ու ֆինանսական բաժինների աշխատակիցների կողմից:

Տեղական տուրքերը դրանք ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքից, հեղուկ վառելիքի հեղուկացված գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման համար, շինարարության թույլտվությունների դիմաց վճարները և օրենքով սահմանված այլ վճարները:

Այլ եկամուտների շարքին են պատկանում համայնքի սեփականություն համարվող գույքի և հողատարածքի վաճակալության դիմաց մուտքերը, աղբահանության վճարները, վարչական իրավախախտումների դիմաց մուտքերը, ինչպես նաև չնախատեսված այլ մուտքեր:

Համայանքի բյուջեի եկամուտի որոշ մաս կազմում է նաև անշարժ և շարժական գույքի օտարումից ստացված կապիտալ մուտքերը: 2022 թվականին նախատեսվում է համայնքային բյուջե մուտք իրականացնել մոտ 100.000.000 միլիոն ՀՀ դրամ հարկ համայնքային հողերի օտարումից:

Համայնքի բյուջեի հիմնական մասը կազմում են պետական դրամաշնորհները՝

1. Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ.
2. Պետական բյուջեից համայնքային բյուջե տրամադրվող այլ դոտացիաներ:
3. Պետական բյուջեից համայնքի բյուջե տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)
4. Կապիտալ ներքին դրամաշնորհներ՝ ստացված կառավարման և այլ մարմիններից (սուբվենցիաներ):

Համայնքի բյուջեի ծախսային մասը բնականաբար կախված է եկամուտներից:

Ծախսի հիմնական մասը կազմում է աշխատավարձը: Մնացած այլ ծախսերն են ՝ էլ. էներգիայի վարձավճարները, համայնքի և բնակավայրերի թվով 18 մանկապարտեզներին հատկացվող սննդի գումարները, խմելու ջրի, կապի, վառելիքի և այլ ծառայությունների դիմաց կատարվող ծախսերը:

Կապիտալ ծախսերը դրանք՝ բնակելի շենքերի տանիքների հիմնական և ընթացիկ վերանորոգումներն են, համայնքի և բնակավայրերի տարածքում կանաչապատման և ջրագծերի անցկացման ծախսերը, ճանապարհների կապիտալ վերանորոգման ծախսերը, գազաֆիկացումը, զբոսայգիների, բակերի կառուցապատման և նորոգման ծախսերը:

Նպատակային սուբվենցիաների հատկացման դեպքում կատարվում են նպատակային աշխատանքներ:

Համայնքային հնգամյա զարգացման ծրագրում ընդգրկված են՝ գործող մանկապարտեզների տանիքների կառուցման և գազաֆիկացման աշխատանքները:

Սպորտի զարգացման ծրագրում ընդգրկված է Սպորտ համալիրի մասնակի նորոգման և, ֆուտբոլի դաշտի նորոգման աշխատանքներ : Ինչպես նաև բակերում խաղահրապարակների կառուցումն ու վերանորոգումը:

2.4 Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Մեծամոր խոշորացված համայնքում մեծ խնդիր և խոչընդոտ է բարեգործության խթանումը դոնոր կազմակերպությունների և այլ աղբյուրների ներգրավվումը անհրաժեշտ սոցիալ-տնտեսական, մշակույթային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, ծրագրերի իրականացման ուղղությամբ, իսկ առկա զարգացման խոչընդոտները և դժվարություններն առաջանում են ֆինանսական միջոցների բացակայությունից: Ակնկալվում է պետական աջակցությունը, համաձայն որի համայնքում կիրականան մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ.

Դրանցից են՝

1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում:
2. Նախադպրոցական արտադպրոցական դաստիարակության խթանում:
3. Արտադպրոցական մշակույթային մարզական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը, գազաֆիկացում:
4. Մշակույթային և մարզական կյանքին երիտասարդության ներգրավվում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսու:.
5. Համայնքում բնակավայրերի բարեկեցիկ պայմանների ստեղծում և կանաչապատ տարածքների ընդլայնում:
6. Սանիտարական վիճակի պահպանման համար աղբատար մեքենաների և տեխնիկական միջոցների քանակի անհրաժեշտություն:
7. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման և կազմակերպման համար տեխնիկայի և տրանսպորտային միջոցների անհրաժեշտություն:
8. Հաշմանդամներին Համայանքի հասարակական կյանքին մասնակից դարձնելու համար համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովում, ինչպես նաև հաշմանդամության սայլակներին համապատասխան համայնքում հասարակական օբյեկտների մուտքերի

հարմարեցում: Նման միջոցառումներն առավել կնպաստեն հաշմանդամների մասնակցությանը հասարակական կյանքին:

9. Համայնքի բնակիչների համար առավել արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմանների բարելավում:
10. Համայնքի բնակիչների համար աշխատատեղերի ստեղծում և այլն :

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերը

1. Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստություն՝ համայնքի և բնակավայրերի մեծ մասի մոտ գտնվելը մարզկենտրոնին և մայրաքաղաքին և Մ5՝ Հայաստան-Թուրքիա ավտոճանապարհի առկայությունը,
2. Գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն,
3. Համայնքապետարանի զարգացած տեղեկատվական համակարգի և մասնավորապես՝ Քաղաքացիների սպասարկման գրասենյակի գործունեության շնորհիվ առավելագույնս կազմակերպված է ազգաբնակչության սպասարկումը:
4. Բնակիչների համար բավարար չափով աշխատատեղերի առկայությունը ՀԱԷԿ-ում համայնքային ենթակայության հիմնարկներում Երևան և Արմավիր քաղաքներում՝ հասարարկական այլ կազմակերպություններում.
5. Երիտասարդ սերնդի կրթական բարձր մակարդակը
6. Համայնքում գազամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերի առկայությունը,
7. Լավ կազմակերպված վարչակազմ՝ ներդրողներին օգնելու և ուղղորդելու համար
8. Պատմամշակութային արժեքների առկայություն,
9. Համերաշխ և հյուրասեր բնակչություն
10. Բնակչության վստահությունը Տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ
11. Բարենպաստ կլիմայական պայմաններ

Համայնքի թույլ կողմերը

1. Բժշկական կենտրոնն ունի հիմնանորոգման և վերազինման խիստ կարիք:
2. Անբարեկարգ վիճակում են գտնվում համայնքի ջրահեռացման և ոռոգման ցանցերը:
3. Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք են զգում ճանապարհային տնտեսության զգալի մասը, բակային տարածքները:

4. Վերազինման կարիք ունի համայնքապետարանի և նրա ենթակա կառույցների նյութատեխնիկական բազան:
5. Շարունակում է բաց մնալ երիտասարդների և մեծահասակների ժամանցի կազմակերպման հիմնախնդիրը:
6. Համայնքում մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները:
7. Համայնքային աղբավայրերիի վնասազերծման և օդային ավազանի մաքրության պահպանման խնդիրները,
8. Տրանսպորտային հաղորդակցության վիճակը մայրաքաղաքի և գյուղական բնակավայրերի հետ դեռևս մնում է ոչ բարվոք և ծանրաբեռնված:
9. Բազմաբնակարան շենքերի տանիքների և վերելակների մաշվածությունը
10. Երիդասարդության համար սպորտային, մարզական պայմանների խնդիրը
11. Ոռոգման ջրի ոչ բավարար ջրամատակարարում
12. Արտագաղթը:
13. Ոչ վճարունակ հարկատուներ
14. Երիտասարդության ժամանցային վայրերի բացակայություն
15. Տեղեկատվության տարածման մեխանիզմների բացակայություն

Հնարավորությունները

Համայնքում գործող սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության համակարգման նոր մոտեցումները ենթադրում են առավել հասցեական և նպատակային դարձնել սոցիալական քաղաքականությունը:

Ճանապարհների հետևողական բարեկարգումը անվտանգ երթևեկության համար կարող է ստեղծել բավարար պայմաններ:

Իրականացվել են տանիքների վերանորոգման, խմելու ջրի մատակարարկման համակարգի վերանորոգման լայնածավալ աշխատանքներ:

1. Ջերմոցային տնտեսության զարգացում:
2. Արտադրամասերի և արդյունաբերական ձեռնարկությունների հիմնում:
3. Խորքային հորերի հորատում և վերականգնում:

4. Համագործակցության շրջանակների ընդլայնում՝ տնտեսական կյանքի աշխուժացում
5. Կրթական պոտենցիալ
6. Սեզոնային աշխատուժի առկայություն
7. Կառավարության տրամադրվածությունը քաղաքի զարգացման նկատմամբ Զբոսաշրջության զարգացում՝ հատկապես էկո և ագրո զբոսաշրջության ուղություններով,
8. Նոր աշխատատեղերի ստեղծում
9. Բարենպաստ բնակլիմայական պայմաններ
10. Միջազգային համագործակցություն, քույր քաղաքներ

Սպառնալիքները

1. Մեծամոր համայնքի մի շարք բնակավայրերի գտնվելը ՀԱԷԿ-ի 5 կմ և 10 կմ միջուկային և ճառագայթային աղետի գոտում,
2. Արտակարգ իրավիճակների դեպքում թաքստոցների անբավարար պայմաններ կամ քանակության պակաս
3. Պատերազմական իրավիճակ
4. Երկրաշարժ
5. Կարկուտ, ցրտահարություն
6. Գործազրկության մակարդակի աճ
7. Հարկային պարտավորությունների կատարման վատ վիճակը
8. Բնակֆոնդի վիճակի վատթարացում
9. Անկանխատեսելի ոլորտային փոփոխություններ
10. Աշխատատեղերի պակաս
11. Եկամուտների անկայունություն
12. Աղբահանության խնդրի առաջացում

3.Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Համայնքի զարգացման տեսլականը

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի առաքելությունն է ապահովել առողջ և անվտանգ շրջակա միջավայր, որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և զբոսաշրջիկներին, ապահովել համայնքի բնականոն զարգացումը, Մեծամորը դարձնել բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն է հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, ապահովել համայնքի բնականոն զարգացումը, համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ:

Համայնքի զարգացման ծրագրի արդյունքում ակնկալվում է համայնքի սեփական եկամուտների աճ, բայց միայն դա բավարար չէ որպիսի համայնքը լինի առավել զարգացած:

Համայնքում անհրաժեշտ է ստեղծել նոր աշխատատեղեր՝ մասնավորապես Մեծամոր համայնքը 2022 թվականին համագործակցում է «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության հետ: Պլանավորվում է կառուցել նոր հացի գործարան Մեծամոր համայնքի 1 թաղամաս վարչական կենտրոն 1/3 հասցեում, որի շահառուները կլինեն Արցախի Հանրապետությունից տեղահանված բնակչությունը և համաձայն որի համայնքում կբարձրանա բնակչության կենսամակարդակը, որոշ բնակչության սոցիալ տնտեսական մակարդակը:

Անհրաժեշտ է համայնքում և բնակավայրերում վերականգնել խորքային հորերը, որը կնպաստի համայնքի կանաչապատ գոտիների ընդլայնմանը, բարեկարգմանը, միաժամանակ ապահովելով գյուղացիական տնտեսությունների

պահանջարկը: Անհրաժեշտ ֆինանսական միջոցները 2022 թվականին կազմում են 105 753 000 ՀՀ դրամ, որի 60 %-ը ֆինանսավորելու է պետությունը:

Համայնքում անհրաժեշտ է վերակառուցել բազմաբնակարան շենքերի ևտանիքները, և վերելակների փոխարինումը նորով, որն անհրաժեշտ է բնակիչների բնակարանների գույքային պայմանների պահպանման համար: Անհարժեշտ ֆինանսական միջոցները 2022 թվականին միասին կազմում են 181 000 000 ՀՀ դրամ, որի 45 %-ը ֆինանսավորելու է պետությունը:

Համայնքում ամբողջ ընթացիկ տարում մանկապարտեզների շարունակական գործունեությունն ապահովելու և երեխաների համար ձմռան շրջանում ջերմային պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է մանկապարատեզների ջեռուցման համակարգի կառուցումը, որի ֆինանսական միջոցները 2022 թվականին կազմում է 360 000 000 ՀՀ դրամ, որի 70 %-ը ֆինանսավորելու է պետությունը:

Համայնքում հինգ տարիների ընթացքում առավել բարեկարգ ճանապարհներ ունենալու և պահպանելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները 2022 թվականին կազմում են 50 000 000 ՀՀ դրամ, , որի 35 %-ը ֆինանսավորելու է պետությունը:

Այս բոլոր ծրագրերի իրականացման գործում անհրաժեշտ է ունենալ պետական, բարեգործական, այլ ֆինանսական աղբյուրների կամ դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսական աջակցություն:

Համայնքի առաքելությունն է ապահովել առողջ և անվտանգ շրջակա միջավայր, որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և զբոսաշրջիկներին, ապահովել համայնքի բնականոն զարգացումը, Մեծամորը դարձնել բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար:

Համայնքի ռազմավարական նպատակն է՝ բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով և կանաչ տնտեսության սկզբունքները ներդնելով, ապահովել քաղաքի կայուն զարգացումը, այն դարձնել տարածաշրջանային ֆինանսական, կրթական և զբոսաշրջության կենտրոն:

Համայնքի հնգամյա զարգա ցման ծրագրի հիմնական նպատակներն են

1. Մեծամոր համայնքի տարածքային համաչափ, կայուն զարգացումը և պլանավորումը
2. Մեծամոր համայնքի շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլանի կազմումը
3. Բնակչության կենսական շահերի ապահովումը
4. Քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացման պահովումը
5. Բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը՝ ինչպես Մեծամոր բնակիչների, այնպես էլ զբոսաշրջիկների համար
6. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը
7. Բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և որակի էական բարելավումը էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործումը
8. Մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության, իսկ մշակույթի տան ամբողջական հիմնանորոգման աշխատանքների ավարտի ապահովումը
9. Առողջ ապրելակերպի խրախուսումը՝ այդ նպատակով նպաստավոր պայմանների ստեղծում գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, միջազգային համագործակցության ընդլայնումը, քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

4. Ծրագրերի անձնագրերը

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1

« ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			181 000 000	170 000 000	150 000 000	120 000 000	100 000 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			181 000 000	170 000 000	150 000 000	120 000 000	100 000 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			181 000 000	170 000 000	150 000 000	120 000 000	100 000 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. աշխատանքների նախագծում 1.2. տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. շինարարական նյութերի ձեռք բերում 2.2. աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 2022 թ.՝ *13 985 000* Ընդհանուր բյուջեն՝ *721 000 000*						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2

« ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՋԵՌՈՒՑՈՒՄ »

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՋԵՌՈՒՑՈՒՄ						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցա-նիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			360 000 000	360 000 000	150 000 000	150 000 000	100 000 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցա - նիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			360 000 000	360 000 000	150 000 000	150 000 000	100 000 000
	2.						
	Ցուցա-նիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			360 000 000	360 000 000	150 000 000	150 000 000	100 000 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. աշխատանքների նախագծում 1.2. շինարարական նյութերի ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2 աշխատանքների իրականացում համակարգի փորձարկում						
Ծրագրի բյուջեն	*Ընթացիկ ծախսեր 2022 թ.՝ 28 007 506* *Ընդհանուր բյուջեն՝ 1 120 000 000*						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Մանկապարտեզների գազաֆիկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները/ նախադպրոցական հասակի երեխաներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2026թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի հիմնական նպատակն է շենքերի վերանորոգմամբ երեխաների համար ստեղծել շենքային բարենպաստ պայմաններ՝ սանիտարահիգիենիկ նորմերի ապահովմամբ: Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք բարեկարգված մանկապարտեզներ, նոր և գեղեցիկ կահույք, որոնք երեխաների և բնակիչների համար կծառայեն երկար						

	տարիներ: Ծրագրի իրականացման միջնաժամկետ արդյունքում կունենանք հիմնանորոգված մանկապարտեզներ և մանկապարտեզներին հարող բարեկարգված տարածքներ, որի հետագա շահագործումը կլինի արդյունավետ:Նշված նախադպրոցական հաստատությունների շենքերը կապահովագրվեն հետագա քայքայումից, կլինեն ավելի անվտանգ, ավելի հարմարավետ և ժամանակակից:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3

«Մշակույթի տան վերանորոգման և ջեռուցման աշխատանքներ»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մշակույթի տան վերանորոգման և ջեռուցման աշխատանքներ						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			80 000 000	100 000 000	120 000 000	100 000 000	100 000 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			80 000 000	100 000 000	120 000 000	100 000 000	100 000 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			80 000 000	100 000 000	120 000 000	100 000 000	100 000 000
Ծրագրի հիմնական գործողություն ները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. աշխատանքների նախագծում 1.2. շինարարական նյութերի ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 տեխնիկայի վարձակալում, աշխատանքների կատարում 2.2 արտադրանքն ապահովող նյութերի ձեռք բերում և տեղադրում						
Ծրագրի բյուջեն	*Ընթացիկ ծախսեր 2022թ. ՝ 7 168 600* *Ընդհանուր բյուջեն՝ 500 000 000*						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Մշակույթի տան վերանորոգման և ջեռուցման աշխատանքներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Մեծամոր /քաղաք/ համայնք, բնակավայրեր, համայնքի բնակիչներ, երեխաներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2026թթ						

Ծրագրի համառոտ նկարագրություն	**Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ջեռուցված և վերանորոգված մշակույթի տուն:** **Ծրագրի իրականացման միջնաժամկետ արդյունքներում կունենանք ջեռուցման համակարգ և վերանորոգված մշակույթի տուն, որոնց հետագա շահագործումը կլինի առավել արդյունավետ:** **Մշակույթի տունը կշահագործվի նաև ցուրտ ամիսներին և կապահովագրվեն հետագա քայքայումից:**

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 4

« Երաժշտական դպրոցների վերանորոգում և ջեռուցում»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Երաժշտական դպրոցների վերանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			35 000 000	100 000 000	40 000 000	30 000 000	30 000 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			35 000 000	35 000 000	35 000 000	35 000 000	35 000 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			35 000 000	35 000 000	35 000 000	35 000 000	35 000 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. աշխատանքների նախագծում շինարարական նյութերի ձեռք բերում 1.2. տեխնիկայի վարձակալում, հիմքերի կառուցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. աշխատանքների կատարում 2.2 արտադրանքն ապահովող նյութերի ձեռք բերում և տեղադրում						
Ծրագրի բյուջեն	*Ընթացիկ ծախսեր 2022 թ. ՝ 2 624 800* *Ընդհանուր բյուջեն՝ 235 000 000*						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Մեծամոր /քաղաք/ համայնք, համայնքի բնակիչներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2026թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նպատակ ունի ապահովել երաժշտական դպրոց հաճախող երեխաների կենսական շահերը և բարեկեցությունը՝ երաշխավորելով նրանց կյանքի որակի						

	բարելավումը և ստեղծագործելու հնարավորությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 5

« Խորքային հորերի վերականգնում»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խորքային հորերի վերականգնում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			105 753 000	100 000 000	70 000 000	50 000 000	50 000 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			105 753 000	100 000 000	70 000 000	50 000 000	50 000 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			105 753 000	100 000 000	70 000 000	50 000 000	50 000 000
Ծրագրի հիմնական գործողությունները	*1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *1.1 աշխատանքների նախագծում* *1.2. տեխնիկայի վարձակալում* *2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *2.1. աշխատանքների իրականացում* *2.2 փորձարկում*						
Ծրագրի բյուջեն	*Ընթացիկ ծախսեր 2022թ.՝ 7 702 710* *Ընդհանուր բյուջեն՝ 375 753 000*						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	*Աշխատուժ, նյութեր և տեխնիկա*						
Ծրագրի հիմնական ռիսկերը	*Խորքային հորի հորատում*						
Ծրագրի հիմնական շահառուները	*Մեծամոր /քաղաք/ համայնք, համայնքի բնակիչներ, բնակավայրերի բնակիչներ*						
Ծրագրի սկիզբ և ավարտ	*2022-2026թթ*						
Ծրագրի համառոտ նկարագրություն	*Համայնքում կանաչապատ տարածքների ընդլայնում, բարեկարգում և պահպանում, գյուղատնտեսական հողերի ոռոգում*						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 6

« Ճանապարհների վերանորոգման աշխատանքներ»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Ներհամայնքային ճանապարհները, բնակավայրային ճանապարհները ունեն մասնակի վերանորոգման և պահպանման կարիք**						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			50 000 000	200 000 000	250 000 000	300 000 000	350 000 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			50 000 000	200 000 000	250 000 000	300 000 000	350 000 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			50 000 000	200 000 000	250 000 000	300 000 000	350 000 000
Ծրագրի հիմնական գործողությունները	*1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *1. 1 նյութերի ձեռք բերում* *1.2. տեխնիկայի վարձակալում* *2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *2.1. տեխնիկայի փորձարկում* *2.2 աշխատանքների իրականացում*						
Ծրագրի բյուջեն	*Ընթացիկ ծախսեր 2022թ.՝ 3 800 000* *Ընդհանուր բյուջեն՝ 1 150 000 000*						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	*Աշխատուժ, նյութեր և տեխնիկա*						
Ծրագրի հիմնական ռիսկերը	*Ներհամայնքային ճանապարհները, բնակավայրային ճանապարհները ունեն մասնակի վերանորոգման և պահպանման կարիք*						
Ծրագրի հիմնական շահառուները	*Մեծամոր /համայնք/ համայնքի բնակիչներ/բնակավայրերի բնակիչներ*						
Ծրագրի սկիզբ և ավարտ	*2022-2026թթ*						
Ծրագրի համառոտ նկարագրություն	*Համայնքի բյուջեի միջոցներով ամեն տարի իրականացվել են միջհամայնքային փողոցների մասնակի ասֆալտապատման, մասնակի բետոնապատման փոսալցման աշխատանքներ, որոնք երկարացրել են փողոցների շահագործումը ապահովելով*						

	ավտոմեքենաների անվտանգ երթևեկությունը և մարդկանց բնականոն տեղաշարժը, սակայն դրանք իրականացվել են փոքր ծավալներով: Ծրագրի իրականացման շնորհիվ համայնքը կկարողանա վերանորոգել մոտ 25 կմ ճանապարհատված:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 7

«Գազաֆիկացման աշխատանքներ»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գազաֆիկացման աշխատանքներ						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
		-	256 500 000	150 000 000	150 000 000	100 000 000	100 000 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			256 500 000	150 000 000	150 000 000	100 000 000	100 000 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
			256 500 000	150 000 000	150 000 000	100 000 000	100 000 000
Ծրագրի հիմնական գործողությունները	*1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *1. 1 գազատար խողովակների կառուցման աշխատանքներ իրականացման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում* *1.2. գազատար խողովակների տեղափոխում* *2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *2.1. աշխատանքների իրականացում*						
Ծրագրի բյուջեն	*Ընթացիկ ծախսեր 2022թ. ՝18 255 000* *Ընդհանուր բյուջեն՝ 756 500 000*						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	*Աշխատուժ, նյութեր և տեխնիկա*						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	*Հանայնքի բնակիչները, երիտասարդ սերունդ*						
Ծրագրի սկիզբ և ավարտ	*2022-2026թթ*						
Ծրագրի համառոտ նկարագրություն	*Գազատար խողովակների կառուցման աշխատանքների առաջնահերթությամբ է պայմանավորված մի շարք սոցիալական խնդիրների լուծումը՝ այդ թվում, բարենպաստ միջավայրի ստեղծումը՝ բավարարված կլինեն բնակիչների նվազագույն անհրաժեշտ*						

	կարիքները: Հարկ է նշել, որ Հայաստանում տնային տնտեսությունների 90 տոկոսից ավելին բնական գազն օգտագործում է որպես ջեռուցման և սննդի պատրաստման միջոց, հետևաբար համայնքի բնակիչները ավելի արդյունավետ կօգտագործեն իրենց ժամանակը, իսկ երեխաները կկարողանան ապահով և տաք միջավայրում ապրել:

5. ՀՀՀԶԾ ֆինանսավորում

Հ/Հ	Եկամուտների տեսակը	2022 փաստացի	2023 նախատեսված	2024 նախատեսված	2025 նախատեսված	2026 նախատեսված
1.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	2777900,3	3011690,9	3285939,7	3571837,8	3969666,2
2.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1195203,0	1428993,6	1703242,4	1989146,5	2386968,8
3.	ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1045203,0	1248993,6	1487242,4	1773140,5	2127768,9
4.	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	715579,0	858694,8	1030433,8	1236520,5	1483824,6
5.	ՀՈՂԻ ՀԱՐԿ	274489,0	329386,8	395264,2	474317,0	569180,4
6.	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	441090,0	529308,0	635169,6	762203,5	914644,2
7.	ԵԿԱՄՏԱՀԱՐԿ	-	-	-	-	-
8.	ԱՅԼ ՀԱՐԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	-	-	-	-	-
9.	ՏՈՒՐՔԵՐ	55624,0	66748,8	80098,6	96118	115341,9
10.	ՊԵՏԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ					
11.	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	55624,0	66748,8	80098,6	96118,3	115341,9
12.	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	274000,0	323550,0	376710,0	440502,0	528602,4
13.	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹ-ՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐ	40000,0	44000,0	44000,0	44000,0	52800,0
14.	ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹ-ՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	12500,0	13750,0	13750,0	13750,0	16500,0
15.	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՌՈՒՄ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԻՄ ԿՈՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏ-ՎՈՒԹՅԱՆ	-	-	-	-	-

	ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ					
16.	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ	146700,0	176040,0	211248,0	253497,6	304197,1
17.	ԱՅԼ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	74800,0	89760,0	107712,0	129254,4	155105,3
18.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹ-ՅՈՒՆԻՑ	150000,0	180000,0	216000,0	216000,0	259200,0
19.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ /ԴՐԱՄԱՇՆՈՐՀ/	1582697,3	1582697,3	1582697,3	1582697,3	1582697,3
20.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	-	-	-	-	-
21.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	-	-	-	-	-

Վերջաբան

Համայնքի զարգացման ծրագիրը հանդիսանում է Մեծամոր համայնքի առաջիկա հինգ տարիների զարգացման ուղեցույցը և տեսլականը: Զարգացման ծրագրի լիարժեք իրականացումը ապահովելու է համայնքի համաչափ զարգացումը, համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացումը, նյութական և մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, զբոսաշրջության զարգացումը, ներդրումների ավելացումը և բնակիչների համար էլ ավելի բարեկեցիկ ու բնակության համար բարենպաստ համայնք դառնալը: Զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումը կապահովի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է օգտագործել համայնքի ողջ ներուժը, ներգրավել արտաքին միջոցներ, համագործակցել պետական կառույցների հետ, դիմել տեղական և միջազգային կառույցների: Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական վիճակից, զարգացման տեմպերից յուրաքանչյուր հաջորդ տարիների տարեկան բյուջեների հաստատման ժամանակ հնարավոր է որոշակի փոփոխություններ և շտկումներ, որը օրենքի ուժ կստանա համայնքի ավագանու համապատասխան որոշում ընդունելուց հետո: Համայնքի զարգացման ծրագրում փոփոխություններ կարող են կատարվել հիմք ընդունելով համայնքի բնակիչների, համայնքի ավագանու անդամներից ստացված առաջարկությունները, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը: